


5024

ԵՐԱՒԻԹ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ

ՍՏԱԼԻՆ

(ՀԱՐՄՈՆ ԿԵՆԱՇՔԲԱԽՈՅԵ)

ՅԿՊ14
ի-70





09 AUG 2005

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՅ. Կ(ը)Կ ԿԿ-ին ԿիՅ ՄԱՐՔՍԻ—ԵՎԳԵԼԻՍԻ—ԼԵՆԻՆԻ ԽՆՏՏՒՑՈՒՏ

ՀԿՊ(Դ)
Կ-70

1 DEC 2009

ԻՈՒԹ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ ԱՏԱԼԻՆ

(ՀԱՄԱՌԱԾ ԿԵՆՍԱԳՐԱԿԹՅՈՒՆ)



13845
6000

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940

5024

29.04.2013

ԻՌԱՎԻՑ ՎԻՍՏԱՎԻՌԻՈՆՈՎԻՉ

ՍՏԱԼԻՆ

(ՀԱՄԱՐՈՒՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

I

Իսակի Վիստավիոնովիչ ՍՏԱԼԻՆ (Զուղացլիլին)

ծնվել է 1879 թ. գեկտեմբերի 21-ին Թիֆլիսի նահանգի Գորի քաղաքում։ Նրա հայրը՝ Վիստավիոն Իվանովիչ Զուղացլիլին, ազգով վրացի, Թիֆլիսի նահանգի Դիդի-Լիլո գյուղացի յեր, արհեստով կոշկակար, հետագայում Ադելիսանովի կոշկեղենի ֆաբրիկայի բանվոր Թիֆլիսում։ Մայրը՝ Յեկատերինա Գորդովիլին Դամբարեռութիւն գյուղի ճորտ գյուղացի Գելաձելի ընտանիքից եր։

1888 թվի աշնանը Ստալինն ընդունվեց Գորու հոգևոր դպրոցը։ 1894 թվին Ստալինն ավարտեց դպրոցը և նույն տարին ել մտավ Թիֆլիսի հոգևոր սեմինարիան։

Ինուսատանում այդ տարիներին արդյունաբերական կտակիտալիզմի զարդացման և բանվորական շարժման աճման հողի վրա ակտիվ լայն չափերով տարածվել մարքսիզմը։ Լենինի ստեղծած ու ղեկավարած՝ Պետերբուրգի «Բանվոր դասակարգի աղատաղբության պայքարի միությունը» ուժութիւն զարկ տվեց սոցիալ-դեմոկրատական շարժման զարդացմանն ամբողջ յերկրում։ Բանվորական շարժման ալիքները հասան նաև մինչև Անդրկովկաս, ուր արդեն թափանցել եր կապիտալիզմը, վորտեղ ուժեղ եր ազգային-քաղաքական ճնշումը։ Անդրկովկասը ոռուսական ցարիզմի տիպիկ գաղութն եր, տնտեսապես հետամնաց, ազրարային մի յերկիր, դեռևս ուժեղ ճորտատիրական մնացորդներով, մի յեր-



2/32
40

ИОСИФ ВИССАРИОНОВИЧ СТАЛИН
(Краткая биография)

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

կեր՝ շերտընդմեջ, իրար հետ խառն ապրող բազմաթիվ ազ-
դություններից բազկացած բնակչությամբ: XIX դարի վեր-
ջին քառորդում կապիտալիզմն սկսեց արագործեն զարդա-
նալ Անդրկովկասում, գիշատիչ շահագործման յենթարկելով
բանվորներին ու դյուլացիներին, սաստկացնելով ազգային-
դաղութային ճնշումը: Հատկապես արագ եր գաղրդանում
հանքային արդյունաբերությունը, նավթի հանույթն ու
մշակումը, վորտեղ հիմնական գիրքերը դրավել եր արտա-
սահմանյան կապիտալը: «Խուսական կապիտալիզմը, —դրում
եր Լենինը, —այդպիսով Կովկասը քաշում եր համաշխար-
հային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում
եր նրա տեղական առանձնահատկությունները—հին նահա-
պետական պարփակվածության մնացորդը, —շուկա յեր ըս-
տեղծում իր գործարանների համար: Այդ յերկիրը, վոր
հետուեփորմյան շրջանի սկզբում թույլ բնակչություն ուներ,
կամ վորի բնակիչները կազմում եյին համաշխարհային
տնտեսությունից հեռու և նույնիսկ պատմությունից հեռու
կանոնած լեռնականները, դառնում եր նավթարդյունաբե-
րողների, դինու առևտրականների, ցորենի և ծիսախոտի
գործարանատերերի յերկիր...»¹: Կովկասում յերկաթու-
զիների և առաջին ֆաբրիկաների ու գործարանների յերեա-
լով՝ ասպարեղ յեկավ նաև բանվոր դասակարգը: Առանձ-
նապես արագ եր զարգանում նավթային բազուն—խոչոր
արդյունաբերական ու բանվորական կենտրոնը Կովկասում:

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանը համըն-
թաց աճում եր բանվորական շարժումը: 90-ական թվական-
ներին Անդրկովկասում հեղափոխական աշխատանք եյին
կատարում այնտեղ աքսորված ուսւ մարքսիստները: Անդր-
կովկասում սկսվել եր մարքսիզմի պրոպագանդան: Թիֆլի-
սի սեմինարիան այդ ժամանակ յերիտասարդության մեջ
տարածվող թե՛ նարուղնիկական-նացիոնալիստական և թե՛
մարքսիստական — ինտերնացիոնալիստական սպատակական
գաղափարների ոջախն եր. նա լիքն եր զանազան գաղտ-

¹ Լենին, հ. III, էջ 464:

նի խմբակներով: Աեմինարիայում տիրող յեղվիտական ու-
ժիմը Ստալինի մեջ բուռն բողոք եր առաջացնում, սնում և
ուժեղացնում եր նրա մեջ հեղափոխական տրամադրու-
թյունները: Տասնհինգամյա Ստալինը դառնում է հեղափո-
խական:

«Հեղափոխական շարժման մեջ մտա յես, —ասում է
Ստալինը, —15-ամյա հատակիցս, յերբ յես կապեր հաստա-
տեցի այն ժամանակ Անդրկովկասում ասլրող ուսւ մարք-
սիստների ընդհատակյա խմբերի հետ: Այդ խմբերն ինձ
վրա մեծ ազդեցություն ունեցան և իմ մեջ ընդհատակյա
մարքսիստական դրականության ճաշակ պատվաստեցին»¹:

1896—97 թվականներին Ստալինը դիմավորում է սեմի-
նարիայի մարքսիստական խմբակները: 1898 թ. ողոսառուն
նա նաև սպաշտոնապես մտնում է Ռուսաստանի սոցիալ-դե-
մոկրատական բանվորական կուսակցության Թիֆլիսի կազ-
մակերպության մեջ: Ստալինը դառնում է «Մեսամե զասի»
խմբի անդամ. այդ առաջին վրացական սոցիալ-դեմոկրա-
տական կազմակերպությունն եր, վորը 1893—1898 թ. թ.
վորոշ դրական դեր խաղաց մարքսիզմի դաշավարները տա-
րածելու դործում: «Մեսամե զասին» քաղաքականապես
միտարր չեր—նրա մեծամասնությունը կանոնած եր «լե-
զալ մարքսիզմի» դիրքերում և հակված եր դեպի բուր-
ժուտական նացիոնալիզմը: Ստալինը, Կեցիսովելին, Ծուլու-
կիձեն կազմում եյին «Մեսամե զասիի» հեղափոխական
մարքսիստական այն վոքրամասնության դեկավար կորիդը,
վորը հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տաղմը դար-
ձայի վրաստանում:

Ստալինը շատ ու համառորեն աշխատում է իրեն վրա:
Նա ուսումնասիրում է Մարքսի «Կապիտալը», «Կոմունի-
տական կուսակցության մանիֆեստը» և Մարքսի ու Ենգել-
սի մյուս աշխատությունները, ծանոթանում է Լենինի՝ նա-
րոդունիկության, «լեզալ մարքսիզմի» և «եկոնոմիզմի» դեմ

¹ Ի. Ստալին, Զրույց գերմանական դրող եմիլ Լուդվիգի հետ:
1938 թ., էջ 9:

ռւղղված յերկերին : Ստալինի թեորիական պահանջների շըրչանն անչափ լայն ե—նա ուսումնասիրում ե վիլիսովիայություն, քաղաքատնտեսություն, պատմություն, բնական գիտություններ, կարգում ե գեղարվեստական դրականության կլասիկներին : Ստալինը դառնում ե կրթված մարքուստ : Այդ ժամանակ արդեն լենինի աշխատությունները խորը տպալորություն դորձեցին Ստալինի վրա : «Յես ինչպես ել լինի՝ պետք ե տեսնեմ նրան», — ասաց Ստալինը, կարգալով Տուլինի (լենինի) աշխատությունը, — ճիշում և այն ժամանակ Ստալինին մոտիկից ճանաչող ընկերներից մեկը¹:

Ստալինն այդ ժամանակաշրջանում ինտենսիվ պրոպագանդիստական աշխատանք ե կատարում բանվորական խըմքաներում, մասնակցում ե անլեզալ բանվորական ժողովներին, թուուցիկներ ե գրում, գործադրուշներ ե կաղմակերպում : Հեղափոխական դորձնական աշխատանքի առաջին դպրոցն եր այդ, վոր անցավ Ստալինը Թիֆլիսի առաջավոր պրոլետարների շաբաթում :

«Յես մտաբերում եմ, — ասում եր Ստալինը, — 1898 թվականը, յերբ յես առաջին անդամ ստացա յերկաթուղային արհեստանոցների բանվորներից կաղմված խմբակը... Այսուեղ, այդ ընկերների շրջանում, յես ստացա այն ժամանակ իմ առաջին մարտական հեղափոխական մկրտությունը... իմ առաջին ուսուցիչները Թիֆլիսի բանվորներն են յեղել»²:

Սեմյնարիայում, վորտեղ «կասկածելիների» վրա խիստ հակողություն եր կաղմակերպված, սկսում են գլուխ ընկել Ստալինի անլեզալ հեղափոխական աշխատանքի մասին : 1899 թ. մայիսի 29-ին նրան հեռացնում են սեմյնարիայից՝ մարքսիզմի պրոպագանդայի չամար : Մի վորոշ

¹ Рассказы старых рабочих Закавказья о великом Сталине, воспоминания тов. П. Капанадзе. Հայտ. «Молодая Гвардия»-յի, 1937թ., էջ 37:

² «Правда» № 136, 16 հունիսի, 1926թ.:

ժամանակ Ստալինը ապրում եր գասեր տալով, իսկ հետո աշխատանքի յե մտնում Թիֆլիսի Փիլիպիկական ոբսերվատորիան վորակես հաշվող-դիտող, վոչ մի ըստի չղաղարեցնելով հեղափոխական գործունեյությունը :

Այդ ժամանակ արդեն Ստալինը Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ամենայնանդուն ու աչքի ընկնող աշխատողներից մեկն եր : «1898—1900 թ. թ. շրջանում կաղմակորպվեց ու ձևակերպվեց Թիֆլիսի կաղմակերպության զեկալար կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը... Թիֆլիսի կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը հեղափոխական-պրոպագանդիստական և կաղմակերպական հակայական աշխատանք կատարեց անեղալ սոցիալ-դեմոկրատական կուսակցական կաղմակերպություն ստեղծելու ուղղությամբ»¹ : Ստալինը գլխավորում ե այդ խումբը : Լենինյան «Բանվոր գաստկարդի ազատագրության պայքարի միությունը» այն որինակն եր, վորին անշեղորեն հետեւում ելին իրենց աշխատանքի մեջ Թիֆլիսի հեղափոխական սոցիալ-դեմոկրատական շարժումը Թիֆլիսում «Մեսամե դասիի» հեղափոխական փոքրամանության (Ստալին, Կեցյովելի, Ծուլովկիձե) ղեկավարությամբ այդ շրջանում սկսում ե դուրս գալ բանվորների «աչքի ընկնող միավորների հետ» կատարվող հին, զուտ պրոպագանդիստական աշխատանքի շրջանակներից : Կյանքն առաջին պլանն ե մղում ադիտացիան մասսաների մեջ՝ հրատապ թեմաներին վերաբերող թուուցիկներ բաց թողնելու միջոցով, թուուցիկ ժողովների և ցարիզմի գեմ ուղղվածքաղաքական ցուցցերի միջոցով : Նոր տակտիկան կատարել դիմադրության և հանդիպում «Մեսամե դասիի» ոսկորտունիստական մեծամասնության կողմից, վորը հակվում եր դեպի «Եկոնոմիզմը», խորշում եր հեղափոխական մեթոդներից, հակառակ եր ինքնակալության դեմ «փողոցային» քաղաքական պայքար մղելուն : Ստալինը, «Մեսամե դասիի»

¹ Լ. Բերիա. К вопросу об истории большевистских организаций в Закавказье. 1938թ., էջ 20—21:

Հեղափոխական վոքրամասնությունը կատաղի և անհաջողացար են մզում ոպորտունիստների դեմ նոր տակտիկա, մասսայական քաղաքական ազիտացիայի տակտիկա կիրառելու համար։ Նրանք ջերմ պաշտպանություն են դժուամբի ֆիլիսի առաջավոր բանվորների կողմից։

Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատների՝ աշխատանքի նոր մեթոդների անցնելու դործում աչքի ընկնող դեր խաղաց վիկտոր Կուբանատովսկին—մի կրթված մարքսիստ, Լենինի կայուն հետեւողն ու մերձավորագույն դինակիցը, լենինյան դադախարների տարածողն Անդրկովկասում։ 1900 թ. աշնանը Թիֆլիս գալուց հետո նա սերտ հարաբերության մեջ է մտնում Ստալինի և «Մեսամե դասիի» վոքրամասնության հետ, դառնում է Ստալինի ամենամուտիկ բարեկամն ու դինակիցը։

Յերբ 1900 թ. դեկտեմբերից սկսեց լույս տեսնել լենինյան «Ասկրա»-ն, Ստալինն ամբողջովին կանդնեց նրա դիրքերում։ Ստալինը հենց միանդամից լենինի մեջ նկատեց իսկական մարքսիստական կուսակցություն ստեղծողին, առաջնորդին և ուսուցչին։

«Լենինի հեղափոխական դործունեյությանը ծանոթանը 90-ական թվականների վերջերից և հատկապես 1901 թվից հետո, «Ասկրա»-ն հաստարակվելուց հետո, —ասում է Ստալինը, —ինձ այն համոզմունքին բերեց, վոր մենք հանձին լենինի մի արտասովոր մարդ ունենք։ Նա այն ժամանակ իմ աչքում լոկ կուսակցության զեկավար չեր, նա այդ կուսակցության փաստական ստեղծողն եր, վորովհետեւ միայն նա յեր հասկանում մեր կուսակցության ներքին եյությունն ու անհետաձելի պահանջները։ Յերբ յես նրան համեմատում եյի մեր կուսակցության մնացած զեկավարների հետ, ինձ շարունակ թմվում եր, վոր լենինի զինակիցները—Պլեխանովը, Մարտովը, Ակսելրովը և մյուսները—մի ամբողջ պլատ ցած են կանոնած լենինից, վոր լենինը նրանց հետ համեմատած վոչ թե պարզապես զեկավարներից մեկն ե, այլ բարձր տիպի զեկավար ե, մի լեռնային ար-

ծիլ, վոր չպիտի՝ ինչ ե յերկյուղը պայքարի մեջ և համարձակորեն առաջ ե տանում կուսակցությունը ոռւսական հղափոխական շարժման անծանոթ ճանապարհներով»¹։

Ստալինը համակվեց անսահման հավատով դեպի լենինյան հեղափոխական համարը և գնաց լենինի ուղիով։ Նա յերբեք չչեղվեց այդ ուղուց, և լենինի մասից հետո համարձակ ու վստահ շարունակում է նրա դործը։

Սկսված տնտեսական ձգնաժամի պայմաններում, մուսաստանում բանվորական շարժման ազգեցության տակ և սոցիալ-դեմոկրատների դործունեյության հետեւաքուլ թիֆլիսում 1900—1901 թ. թ. բարձրանում և տնտեսական դործադրուների, մեկ ձեռնարկություն մյուսի հետեւց ընդգրկող դործադրուների ալիքը։ 1900 թ. ոգոստոսին ծավալվում է յերկաթուղային արհեստանոցների ու դեսպաների բանվորների վիթխարի դործադրուլը։ Այդ դործադրուլին ակտիվ կերպով մասնակցում է Փետերբուրգից Կովկաս աքսորված Մ. Ի. Կալինինը։ 1901 թ. ապրիլի 22-ին թիֆլիսի կենտրոնում կազմակերպվում է մայիսենյան ցույց։ Ստալինն այդ ցույցի կազմակերպուն ու զեկավարն եր։ Այդ ցույցը լենինյան «Ասկրա»-ն դնահատեց վորպես ամբողջ կովկասի համար պատմական-նշանակալից մի իրադարձություն։ Նրա ներգործությունը կովկասի հետապա ամբողջ բանվորական շարժման վրա բացառիկորեն մեծ եր։

Այդպես այդ տարիներում «Մեսամե դասիի»՝ Ստալինի դիմավորած հեղափոխական վոքրամասնության զեկավարությամբ իրականացվեց Վրաստանի բանվորական շարժման անցումը նեղ խմբակային պրոպագանդայից մասսայական քաղաքական աղխտացիայի։ Հենց դրանով ել կովկասում ևս սկսեց կենսապորձմել սոցիալիզմի միացումը բանվորական շարժման հետ, ճիշտ այնպես, ինչպես այդ փայլուն կերպով իրականացվում եր դրանից միքանի տարի առաջ Պետերբուրգի «Պայքարի միության» կողմից, վորին զեկավարում եր լենինը։

¹ Ի. Ստալին, լենինի մասին, 1939 թ., հջ 23։

Անդրկովկասյան պղողետարիատի հեղափոխական պայքարի աճումից անհանդատացած՝ ցարական կառավարությունն ուժեղացնում է ուղղեսահաները, հույս ունենալով այդ ճանապարհով կանգնեցնել շարժումը։ 1901 թ. մարտի լույս 22-ի գիշերը վոստիկանությունը խուզարկություն կատարեց Փիդիկական որսերվատորիայում, վորտեղ ապրում ու աշխատում եր Ստալինը։ Խուզարկությունը և պահնորդական բաժնի՝ հետո հայտնի դարձած ձերքակալության կարգադրությունը ստիլում են Ստալինին անլեզալ վիճակի անցնելու։ Այդ ժոմենտից սկսած նա լենինյան դպրոցի պրոֆեսիոնալ հեղափոխականի լարված, հերոսական կյանք և վարում, դորձելով Ռուսաստանի ընդհատակում ընդհուպ մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը։

Ցարի սատրապներն անզոր ելին աճող հեղափոխական շարժման հանդեպ։ 1901 թ. սեպտեմբերից սկսած Ստալինի և Կեցիոնիլելու նախաձեռնությամբ սկսեց լույս տեսնել «Բրձուան» («Պայքար»)՝ առաջին անլեզալ վրացերեն սոցիալ-դեմոկրատական լրագիրը, վորը հետևողականորեն կիրառում եր լենինյան «Ասկրա»-յի դադափարները, անհաշտ պատերազմ եր հայտարարել ուղրուտունիզմի դադափարների ամբողջ շրջանին։ «Բրձուան» «Ասկրա»-յից հետո ամենալավ մարքսիստական լրագիրն եր Ռուսաստանում։ Լայն չափեր և ընդունում նաև թուղթիկների հրատարակումը բաղմանդուկտիվ Անդրկովկասի դահագան լեզուներով։ «Հիանալի գործած պրոկամացիաներ ելին լույս տեսնում ուղարկեն, վրացերեն և հայերեն լեզուներով և վողողում ելին Թիֆլիսի բոլոր թագերը»,՝ գրում եր լենինյան «Ասկրա»-ն Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատների դործունելության մասին¹։ Ստալինի ամենամերձակոր գինակիցը՝ Լազո Կեցիսովելին, շարունակ նրա հետ կապ պահպանելով, Բագվում լենինյան-իսկրայական ուղղության կոմիտե յե ստեղծում և անլեզալ տարարան և կազմակերպում։ 1901 թ. նոյեմբերի 11-ին կայացավ Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-

թյան կոնֆերենցիան, վորտեղ ընտրվեց ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտե։ Կոմիտեյի անդամ ընտրվեց Ստալինը։ Բայց Թիֆլիսում նա չառ կարճ և մնում։ Նոյեմբերի վերջին, Թիֆլիսի կոմիտեյի հանձնարարությամբ, Ստալինը մեկնում է Բաթում, իր մեծությամբ Կովկասի յերրորդ պղողետարական կենտրոնը (Բաղվից և Թիֆլիսից հետո)։

Բաթումում Ստալինը հեղափոխական յեռուն աշխատանք և ծավալում։ Կապեր և հաստատում առաջակող բանվորների հետ, խմբակներ և ստեղծում, անձամբ մի շաք խմբակներ և զեկավարում, անլեզալ տպարան և կազմակերպում, բոցաշունչ թուղթիկներ և գրում, տպում ու տարածում և դրանք, զեկավարում և բանվորների պայքարը Ռուսիայի ու Մանթաշելի գործարաններում, հեղափոխական պրոպագանդա յե կազմակերպում գյուղում։ Ստալինը Բաթումում ստեղծում և սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, հիմնում և ՌՍԴԲԿ Բաթումի կոմիտե, զեկավարում և գործարաններում տեղի ունեցող գործադուլները։ 1902 թ. մարտի 9-ին Ստալինը կազմակերպեց Բաթումի բանվորների հայտնի քաղաքական ցույցը, վորը նա յեր զեկավարում և վորի վլուխ եր անցած նա։ Այսոեղ Ստալինը գործնականորեն իրականացրեց գործադուլի միացումը քաղաքական ցույցի հետ։

Այսպես, այդ շրջանում, ուղղուառնիզմի գեմ մզվող վճռական ու անհաշտ պայքարում կազմակերպեց ու աճեց Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունը։ Նրա ամենաականավոր կազմակերպությունը ու զեկավարը Ստալինն եր, վորին Բաթումի բանվորներն այն ժամանակ արգեն բանվորների ուսուցիչ ելին անլանում։ Անդրկովկասի լենինյան-իսկրայական կազմակերպությունը կառուցվում եր պղողետարական ինտերնացիոնալիզմի հաստատուն հիմքերի վրա, իր շաքերում միավորելով զանազան ազգությունների առաջալոր պղողետարաններին—վրացիների, հայերի, աղբբեթանցիների, ուռւների։ Լենինը հետագայում շատ անդամ եր կուսակցության Անդրկովկասյան կազմակերպու-

¹ «Ասկրա» № 25, 15 սեպտեմբերի 1902 թ.:

թյունը մատնանշում վորպես պրոլետարքական ինտերնացիոնալիզմի որբնակ:

Բաթումում բանվորների սրայքարի վերելքը լուրջ կերպով անհանգատացրեց կառավարությանը: Վոստիկանական խուզարկուները յեռանդով փնտում են «գրդիչներին»: 1902 թ. ապրիլի 5-ին Ստալինին ձերբակալում են: Բայց բանտում ել (սկզբում Բաթումի, հետո—1903 թ. ապրիլի 19-ից սկսած, իր ծանր ուժիմով հայտնի Քութայիսի, հետո կրկին Բաթումի բանտում) Ստալինը կապերը չեկարում հեղափոխական աշխատանքի հետ: Բանտում նըստած, Ա համազումարից յեկած ընկերներից Ստալինն իմանում և բոլշևիկների ու մենշևիկների միջև յեղած ամենալուրջ տարածայնությունների մասին: Ստալինը վճռականապես կպնդնում է Լենինի, բոլշևիկների կողմը:

1903 թ. նոյեմբերի վերջին Ստալինին յերեք տարով աքսորում են Արևելքան Սիբիր, Իրկուտսկի նահանգի Բաւարանսկի գավառի Նովայա Ռուդա գյուղը: Աքսորավայրում նա նամակ՝ ստանում է Լենինից:

«Առաջին անգամ յես Լենինի հետ ծանոթացա 1903 թ., —ստում և Ստալինը:—Ճիշտ ե, այդ անձամբ ծանոթանալ չեր, այլ հեռակա, նամակադրության կարգով: Բայց այդ ծանոթությունն անջնջելի տպագորություն թողեց իմ վրա, փոր յես միշտ ելի կուսակցության մեջ կատարած իմ աշխատանքի ամբողջ ընթացքում: Յես այդ ժամանակ աքսորում ելի գտնվում Սիբիրում... Լենինի նամակը համեմատարար փոքր եր, բայց նա տալիս եր մեր կուսակցության պրակատիկայի համարձակ, աներկուղ քննադատությունը և կուսակցության մերձավորագույն շրջանում կատարելիք աշխատանքի ամբողջ պլանի դարձանալի պարզ ու սեղմ շաբադբանքը»¹:

Աքսորում Ստալինը յերկար չմնաց: Նա բուռն կերպով աղատության եր ձգտում, վորպեսզի բոլշևիկյան կուսակցության կառուցման լենինյան պլանի իրացմանը ձեռնար-

կի: 1904 թ. հունվարի 5-ին Ստալինը փախչում է աքսորից: 1904 թ. գետրվարին Ստալինը դարձյալ Կովկասում է, նախ Բաթումում, իսկ հետո Թիֆլիսում:

II

Համարյա յերկու տարի Ստալինը մնաց բանտում ու աքսորում: Այդ տարիները յերկրում հեղափոխական վերելքի հետագա աճման տարիներ ելին: Այդ ժամանակամիջնում կայացավ ՌՍԴԲԿ Ա համազումարը, զորն ամբապընդուց մարքսիզմի հաղթությունը «եկոնոմիզմի» գեմ: Բայց կուսակցության կողմից ջախջախված հին ոպորտունիստներին, «եկոնոմիստներին» փոխարինելու յեն գալիս նոր ոպորտունիստները, մենշևիկները: Համագումարից հետո բորբոքվում է Լենինի և բոլշևիկների անողոք պայքարը մենշևիկների, նրանց ոպորտունիստական զաղափարների, նրանց պատական ու կազմալուծիչ գործողությունների դեմ: Սկսված ուսւայալոնական պատերազմը և հեղափոխության հասունացումն ել ավելի յեն սրում այդ պայքարը: Ստեղծված կուսակցական ճյնաժամկեցից դուրս գալու յերքը Լենինը տեսնում է III համագումար հրավիրելու մեջ: Համագումարի համար մզվող պայքարը բոլոր բոլշևիկների կենտրոնական խնդիրը դարձավ:

Լենինի հավատարիմ հենարանն այդ պայքարի մեջ կովկասում Ստալինն եր, վոր Անդրկովկասի բոլշևիկների գլուխ եր կանգնած: Ստալինի աշխատանքն այդ շրջանում անցնում է մենշևիզմի դեմ մզվող անողոք պայքարի դրոշի ներքո: Ստալինը—ՌՍԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի անդամը, զեկավարում և նրա աշխատանքը: Ստալինն անխոնջ ե, նա սիստեմատիկորեն շրջում և Անդրկովկասի ուսունները (Բաթում, Ճիաթուրի, Քութայիս, Թիֆլիս, Բագու, արևմտյան Վրաստանի գյուղացիական շրջանները), ամբացնում և կուսակցական հին կազմակերպությունները և ստեղծում ենորերը. նա մասնակցում է մենշևիկների և մարքսիզմի մյուս թշնամիների դեմ մզվող անողոք գոտե-

¹ Ի. Ստալին, Լենինի մասին, Էջ 23:

մարտերին բաղմաթիլ դիսկուսիաներում, յեռանդադին պաշտպանելով բոլշևիկյան դիքքերը, մերկացնելով մենաշեկների ու նրանց նկատմամբ հաշտվողականների պոլիտիկանությունն ու ուղղագույնիզմը:

«Հնկեր Ստալինի դեկավարությամբ 1904 թ. դեկտեմբերին անցկացվեց Բագվի բանվորների վիթխարի գործադուլը, վորը շարունակվեց դեկտեմբերի 13-ից մինչև 31-ը և վերջացավ նաև թարգյունաբերողների հետ կուեկտիլ պայմանագիր կնքելով, վորն առաջին կուեկտիլ պայմանագիրն եր Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ:

Բագվի գործադուլը հեղափոխական վերելքի սկզբը յեղալ Անդրկովկասում:

Բագվի գործադուլը ծառայեց վորպես մի «ազգանշան հունվարյան-պետրվարյան պանծալի յելույթների համար ամբողջ Ռուսաստանում» (Ստալին)՝¹:

Այդ գործադուլը, —ասված է Համեկ(թ)կ պատմության համառոտ դասընթացում, —մի տեսակ նախափոթորկային կայծակ եր հեղափոխական մեծ փոթորկի նախորեյին:

Ստալինը հաստատակամորեն անց ե կացնում Լենինի դիբեկտիլները, զարգացնում ու պաշտպանում ե բոլշևիկյան դաշտաբարները մասսաների առաջ, պայքար ե կազմակերպում հոգուտ III համագումարի: Լենինի կովկասյան միութենական կոմիտեյի միջև շարունակ սերտ կապ եր պահպանվում: Ստալինը կանգնած եր իդեալան-քաղաքական այն պայքարի գլուխ, վոր կովկասյան բոլշևիկները մզում եյին մենշեվիկների, եսերների, նացիոնալիստների, անարիխոսների դեմ ոռուսական առաջին հեղափոխության տարիներին: Այդ պայքարի մեջ բոլշևիկների ամենահզոր զենքը կուսակցական դրականությունն եր: Ստալինը բոլշևիկյան համարյա բոլոր հրատարակությունների կազմակերպողն ու նախաձեռնողն եր կովկասում: Անեղալ գրքերի, լրագրերի, բրոշյուրների, պրոկլամացիաների հրատարակությանը նա

¹ Լ. Բերիա. К вопросу об истории большевистских организаций в Закавказье. 1938 թ., եջ 55:

ցարական Ռուսաստանի պայմաններում չտեսնալած թալից հաղորդեց:

Կովկասյան միության դարմանալի խիզախ ձեռնարկություն և բոլշևիկյան ընդհատակյա տեխնիկայի աչքի ընկնող որինակ եր Հավկաբարի գաղտնի տպարանը, վոր աշխատում եր Թիֆլիսում 1904 թ. սկզբից մինչև 1906 թվականից: Այստեղ տպագրվեցին Լենինի «Революционная демократическая диктатура пролетариата и крестьянства», «К деревенской бедноте» աշխատությունները, Ստալինի «Всокользь о партийных разногласиях», «Две схватки» և մյուս բրոշյուրները, կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, տասնյակ թուոցիկներ, վորոնց մի գետմասը գրել ե Ստալինը: Այդ տպարանում եյին հրատարակվում «Борьба пролетариата» և «Листок борьбы пролетариата» լրագրերը: Դրեւը, բրոշյուրները, լրագրերը, թուոցիկները տպվում եյին յերեք լեզվով, միքանի հազար որինակ տիրամներ ունեյին:

Կովկասում բոլշևիզմի դիրքերի պաշտպանության գործում, Լենինի գաղափարների պըռպագանդան գործում վճռական դերը պատկանում ե Ստալինի խըմբագրությամբ լույս տեսնող՝ ՌՍԴԲԿ կովկասյան Միության որդան «Борьба пролетариата» լրագրին, վոր «Բաքուլայի» արժանակոր հաջորդն եր: «Борьба пролетариата»-ն, կուսակցության լինինյան կենտրոնական որդան «Пролетарий»-ից հետո, ամենալավագույն ու ամենախոչըր բոլշևիկյան լրագիրն եր: Լրագրի համարյա յուրաքանչյուր համարում տպվում եյին Լենինի հոգվածները «Пролетарий»-ից: Բազմաթիվ կարեռագույն հոգվածներ Ստալինն ե գրել: Այդ հոգվածներում Ստալինը հանդես ե գտնի վորպես տաղանդավոր բանավիճող, վորպես կուսակցության խոշորագույն գրական ուժ, պըռլետարիատի քաղաքական առաջնորդ, Լենինի հավատարիմ հետեւորդ: Իր հոգվածներում ու բրոշյուրներում Ստալինը մի շարք թեորիական ու քաղաքական հարցեր ե մշակում:

Նա անսխալ կերպով մերկացնում է հակաբուշեիլյան հոսանքների ու ֆրակցիաների խղեական կեղծիքը, նրանց ոպրտունիզմն ու դավաճանությունը: Թշնամիներին ուղղած նրա հոգվածները անվրեպ դիպչում եյին նպատակին: Լենինը հիացմունքով եր խոսում «Борьба пролетариата»-յի, նրա մարքսիստական հետեւղականության, դրական հիանալի հատկությունների մասին:

Ստալինը, լենինի ամենախոր և մինչև վերջը հետեւղական աշակերտն ու գործակիցը, կոմիկասում աչքի ընկնող դեր ե խաղացել մենչեւկմի խղեական ջախջախման մեջ և մարքսիստական կուսակցության խղեոլոգիական, կազմակերպական ու տակտիկական հիմունքների պաշտպանության մեջ: Ստալինի այդ շրջանի աշխատությունները լենինիզմի դիրքերի հետեւղական պաշտպանության որինակ են, աչքի յեն ընկնում թեորիական խորությամբ, անհաշտությամբ դեպի սպորտունիզմը:

Իր «Всокользь о партийных разногласиях» նշանավոր բրոշյուրի և «Фактическая история Упражл.-Театрального общества» հոգվածի մեջ Ստալինը հանդես յեկավ մարքսիստական կուսակցության խղեոլոգիական հիմունքների վճռական պաշտպանությամբ: «Всокользь о партийных разногласиях» բրոշյուրը (գրվել է 1905 թ. սկզբին, լույս ե տեսել անլեգալ հրատարակությամբ 1905 թ. ամառը) բոլշևիկյան մտքի աչքի ընկնող աշխատությունների թվին ե պատկանում: Նա անմիջաբար հարում է լենինի «Что делать?» պատմական գրվածքին, վճռաբար պաշտպանում է լենինյան հանձարեղ գաղափարները: Այդ բրոշյուրում Ստալինը տալիս ե տարերայնության ոպրտունիստական թեորիայի վոչնչացնող քննադատությունը և հիմնավորում է հեղափոխական կուսակցության ու հեղափոխական թեորիայի դերն ու նշանակությունը բանվոր դասակարգի համար:

«Բանվորական շարժումը,—գրում եր Ստալինը,—պետք ե միանա սոցիալիզմի հետ, պրակտիկ գործունեյությունը պետք ե սերտորեն կապակցվի թեորիայի հետ և

դրանով ել տարերային բանվորական շարժմանը սոցիալ-դեմոկրատական իմաստը ու կերպարանը տա... Մենք, սոցիալ-դեմոկրատներս, պետք ե խանդարենք տարերային բանվորական շարժմանը արեգ-յունիսիստական ուղիղությունում, պետք ե այդ շարժումը սոցիալ-դեմոկրատական հունիսի մեջ մտցնենք, սոցիալ-իստական գիտակցություն մտցնենք այդ շարժման մեջ և բանվոր դասակարգի առաջավոր համարմբենք մեկ կենտրոնացված կուսակցության մեջ: Մեր պարտքն ե շարունակ ու ամենուրեք զեկավարել շարժումը, յեռանդով պայքարել այն բոլորի դեմ-թշնամի լինեն, թե «բարեկամ»—ովքեր կկանգնեն դեպի մեր սրբազն նպատակի իրազործումը տանող ճանապարհի վրա»:

Ստալինի յելույթը լիակատար հավանություն գտավ լենինի կողմից: Գնահատելով Ստալինի «Фактическая история Упражл.-Театрального общества» հոգվածը, վոր տպվեց «Борьба пролетариата»-յում 1905 թ. ողոսոսուին, լենինը կուսակցության կը «Пролетарий»-ում (№ 22) նշեց «Հիանալի հարցադրությունը նշանավոր «գրսից գիտակցություն մտցնելու» մասին»:

Մի շաբաթ հոգվածներում Ստալինը հիմնավորում է լենինյան գիծը II համագումարում և նրանից հետո: «Григорьевичарների գասակարգը և պրոլետարեների կուսակցությունը» հոգվածում (հրապարակված է 1905 թ. հունվարի 1-ին «Борьба пролетариата»-յի № 8-ում), վոր նիկոլայ եր կուսակցության կանոնադրության առաջին պարագագին, Ստալինը պաշտպանում եր կուսակցության կազմակերպական հիմունքները, ամբողջովին կանխած լինելով լենինի՝ կուսակցության վերաբերյալ ուսմունքի հողի վրա, զարգացնելով ու հիմնավորելով լենինյան գաղափարները: Այդ հոգվածը պաշտպանում է բոլշևիզմի կազմակերպման այն գաղափարները, վոր լենինը շարադրել ե իր «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» նշանավոր գրքում:

«Մինչև այսոր, —գրում եր Ստալինը, —մեր կուսակ-



ցությունը նման եր մի հյուրասեր նահապետական ընտառիքի, վորը պատրաստ ե ընդունելու բոլոր համակրողներին։ Բայց յերբ մեր կուսակցությունը դարձավ կենտրոնացված կազմակերպություն, նա դեն նետեց նահապետական կերպարանքը և լիովին նմանվեց մի բերդի, վորի դռները միայն արժանավորների համար կբացվեն։ Իսկ այդ մեղ համար մեծ նշանակություն ունի։ Այն ժամանակ, յերբ ինքնակալությունն աշխատում է պրոլետարիատի դասակարգային ինքնակալությունն այլասերել «տրեղյունիզմով», նացիոնալիզմով, կղերականությամբ և այլն, յերբ, մյուս կողմից, լիբերալ ինտելիտենցիան համառորեն աշխատում է սպանել պրոլետարիատի քաղաքական ինքնազործունեյությունը և նրա վրա խնամակալություն ձեռք բերել, —այդ ժամանակ մենք պետք է չափազանց զգացած լինենք և չպետք ե մոռանանք, վոր մեր կուսակցությունը մի բերդ է, վորի դռները միայն արժանավորների համար են բացվում»։

«Ինչպես ե հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» Հոդվածը (Հրապարակված ե «Եօրի պրոլետարիատ»-ի 1904 թ. սեպտեմբերի 1-ի № 7-ում) ՌԱԴՐԿ ազգային ծրագրին վերաբերող մի ուշադրայի մեկնարանություն է։ Ստալինն այդ հոդվածում հիմնավորում և պարզաբանում է կուսակցության ծրագրին ազգային հարցի վերաբերմամբ, ջախջախիչ քննադատության և յնթարկում պրոլետարիատի ազգային սահմանադատման ոպորտունիտական սկզբունքը, հետևողականորեն պաշտպանում է պրոլետարական դասակարգային կազմակերպությունների կառուցման ինտերնացիոնալիստական տիպը։ Այդ հոդվածում Ստալինը հանդես է գալիս վորակեան ազգային հարցի խոչը թերեւիկ, վոր վարպետություն տիրապետում է մարքսիստական դիակելտիկական մեթոդին։ Այդ հոդվածում սաղմնային ձեռվ տրված են այն գաղափարները, վոր հետագայում Ստալինը զարգացրեց իր «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության մեջ։

Ստալինը ոռոսական առաջին հեղափոխության առաջին քայլերից վճռականապես պաշտպանում ու կիրառում է լենինյան ստրատեգիան ու տակտիկան հեղափոխության մեջ, հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան գաղափարը, բուրժուական-դեմոկրատական հեղափոխության՝ սոցիալիստական հեղափոխության վերաճելու լենինյան գաղափարը։ ՌԱԴՐԿ կովկասյան միության թիֆլոսի կոմիտեյի պրոլետացիայի մեջ, վոր վերաբերում եր թիֆլոսի լիբերալների բանկետային կամպանիային, առողջության մեջ և այլական առողջության մեջ, և բուրժուական առողջության մեջ, և բուրժուազիայի դեմ։

«Վո՛չ թե լիբերալների վախկոտ խոսքը, այլ մեր անկեղծ ու համարձակ խոսքը ե հնչի ամբողջ Ռուսաստանում։ Վո՛չ թե լիբերալները, այլ մենք պետք ե տոն տանք ամբողջ հեղափոխական շարժմանը։ Մենք պետք ե պահանջենք գեմովկրատական հանրապետություն ընդհանուր ընտրական իրավունքով, մենք պետք ե պայքարենք և՝ ինքնակալության դեմ, և՛ բուրժուազիայի դեմ։»

Ստալինի դեկավարած կովկասյան միութենական կոմիտեն անդադրում պրոպագանդա յեր անում—տարածում եր III համագումարի վորոշումները, բանվորներին ու դրուցիցներին զինված ասպատմբության կոչ եր անում։ 1905 թ. ստալինյան թուոցիկները մասսաների մեջ բոլեսիզմի դադարիաների պրոպագանդայի որինակ են։ Իր «Զինված ապստամբությունը և մեր տակտիկան», «Ռեակցիան ուժեղացնում ե» և մյուս հոդվածներում Ստալինը ջախջախիչ քննադատության և յենթարկում մենցեկիյան լիդերներին, հետևողականորեն պաշտպանում ու քարոզում է զինված ապստամբության անհրաժեշտությունը։

Հոկտեմբերյան ընդհանուր գործադրություն, վոր ցույց տվեց պրոլետարական շարժման ուժը, կարողությունը, սարսափահար յեղած ցարին ստիլեց հանդես գալու հոկտեմբերի 17-ի մանիթեստով։ Ժողովրդին ամեն տեսակ աղատություններ խոստացող այդ մանիթեստը ժողովրդական մասսաներին խարել եր, ցարական խորամանկություն,

իր տեսակի դադար, վոր ցարին անհրաժեշտ եր դյուքսահամբերին քննեցնելու, ժամանակ չահելու, ուժերը հավաքելու և ապա հեղափոխությանը հարլածելու համար: Բոլցեկիները մասսաներին բացատրում ենին, վոր հոկտեմբերի 17-ի մանիքեսուր մի ծուղակ է: «Հոկտեմբերյան մանիքեսուր» գուրս զալիս Ստալինը Թիֆլիսում եր՝ լենինյան տակտիկական պլանի, հեղափոխության բոլցեկիյան լոգունդների համար մզլող պայքարի յեռուն շրջանում: Հենց նույն որը, հանդես դալով բանվորական միտինդում, Ստալինն ասում եր.

«Մեզ ի՞նչ ե հարկավոր խկապես հաղթելու համար: Դրա համար յերեք բան ե հարկավոր. առաջինը—զինվել, յերկրորդը—զինվել, յերրորդը—կրկին ու կրկին զինվել»¹:

Պաշտպանելով հեղափոխության հաղթության համար համաժողովրդական զինված ապստամբության անհրաժեշտության միտքը, Ստալինը ՌՍԴԲԿ կովկասյան միության Թիֆլիսի կոմիտեի 1905 թ. նոյեմբերին իր գրած պրոկլամացիայի մեջ հետևյալն եր ասում.

«Իր վիթխարիությամբ վո'չ միայն Ռուսաստանի, այլև ամբողջ աշխարհի պատմության մեջ աննախընթաց, անորինակ ընդհանուր քաղաքական գործադուլը, վոր բոնկվել ե այժմ, թերևս, կարող ե հենց այսոր ել վերջանալ՝ չընդունելով համաժողովրդական ապստամբության ձե, բայց այդ կրկինի միայն նրա համար, վոր վաղը կրկին և ավելի մեծ ուժով ցնցի յերկիրը և վերածվի այն վիթխարի զինված ապստամբության, վորը պետք ե լուծի ոռւս ժողովրդի դարալոր վեճը ցարական ինքնակալության հետ, և կջախջախի այդ զարգելի հրեշի գլուխը... Համաժողովրդական զինված ապստամբություն—ահա՛ այն մեծ խնդիրը, վորն այժմ կանգնած ե ոռւսաստանյան պրոետարիատի առաջ և հրամայողաբար իր լուծումն ե պահանջում»:

Այդ ժամանակ Ստալինը հեղափոխական հսկայական աշխատանք եր կատարում Անդրկովկասում: Ստալինի գե-

կավարությամբ ՌՍԴԲԿ կովկասյան միության IV բոլցեկիյան կոնֆերենցիան (1905 թ. նոյեմբեր) վորոշում և հանում զինված ապստամբությունը նախապատրաստելու և անցկացնելու, ցարական Դուման բոյկոտելու, բանվորների ու գյուղացիների հեղափոխական կազմակերպությունները—բանվորների գեղագուստական կոմիտեների Խորհուրդները, գործադուլության կոմիտեները և նախապատրաստելու և ծավալելու համար մզգով պայքարն ուժեղացնելու մասին: Ստալինը մերկացնում և հարվածական եր մենչեւիկիներին, վորպես հեղափոխության ու զինված ապստամբության հակառակորդների: Նա անշեղ կերպով բանվորներին պատրաստում եր վճռական մարտի ինքնակալության գեմ: Ամբողջ Անդրկովկասով մեկ տարածվեց հեղափոխական հրդեհի բոցը: Դեռևս կուսակցության III համագումարը կենինի առաջարկած «Կովկասի գեղագերի առթիվ» բանաձեռում առանձին ուշադրություն նվիրեց Անդրկովկասի բոլցեկիյան կազմակերպությունների՝ վորպես «մեր կուսակցության ամենամարտական կազմակերպությունների» գործունեյությանը, և ամբողջ կուսակցությանը կոչ արեց ամեն կերպ աջակցել նրանց:

1905 թվականի դեկտեմբերին Ստալինը վորպես անդըրկովկասյան բոլցեկիների պատգամավոր մեկնում է Տամբերգորսի (Ֆինլանդիայում) Համառուսական բոլցեկիյան կոնֆերենցիան: Տամբերգորսի կոնֆերենցիայում առաջին անգամ անձամբ հանդիպեցին Լենինն ու Ստալինը: Այդ կոնֆերենցիայում ընկեր Ստալինն ընտրվեց կոնֆերենցիայի բանաձեռները խմբագրող քաղաքական հանձնաժողովի մեջ, վորտեղ նա աշխատում եր Լենինի հետ միասին վորպես աշքի ընկնող կուսակցական դեկալյաներից մեկը:

Դեկտեմբերյան ապստամբության պարտությունից հետո շրջադարձ սկսվեց գեղի հեղափոխության աստիճանական նահանջը: Կուսակցության մեջ պատրաստություն ելին տեսնում ՌՍԴԲԿ IV համագումարի համար: Պայքարը բոլցեկիների ու մենչեւիկիների միջև բորբոքվում է նոր թափով:

¹ Համեկ(ը)կ պատմության համառոտ դասընթաց, եջ 110:

Հրապարակ են դալիս անարխո-սխռիկալիստական տարրերը: Նրանք առանձնապես աղմկել են սկսում թիֆլիսում: Ստալինը Անդրկովկասում բոլոր հակասրուետարական հոսանքների դեմ մզգող պայքարի կենտրոնում է:

Ստալինը ՌՍԴԲԿ Խ համագումարի (Ստոկհոլմ, 1906 թ. ապրիլ) ակտիվ մասնակիցն է, վորագող նա Լենինի հետ կողք-կողքի պաշտպանում եր մենչեկների դեմ բոլշևիկյան դիմը հեղափոխության մեջ: Մենչեկներին պատասխանելով՝ Ստալինը հարցը վնում եր կտրուկ կերպով.

«Կամ պրոլետարիատի հեղեմոնիա, կամ դեմոկրատական բուրժուազի հեղեմոնիա—ահա թե ինչեն ե դըրված հարցը կուսակցության մեջ, ահա վորոնք են մեր տարածայնությունները»:

Համագումարից հետո շուտով Ստալինը դրեց «Տекущий момент и объединительный съезд рабочей партии», բրոցյուրը: Այդ բրոցյուրի մեջ Ստալինը տվեց դեկտեմբերյան զինված ապատամբության դասերի վերլուծությունը, հիմնավորեց բոլշևիկյան դիմը հեղափոխության մեջ և ամփոփեց ՌՍԴԲԿ Խ համագումարի աշխատանքների արդյունքները:

Համագումարից հետո Ստալինը նորից Անդրկովկասում է: Նա անհաջո պայքար ե մզում մենշևկոմի և մյուս հակալրուետարական հոսանքների դեմ: Նա դեկտավարում ե թիֆլիսում վրացերեն լեզվով լույս տեսնող բոլշևիկյան լեռակ լրագրերը—«Ախալի ցիոնվերա» («Նոր կյանք»), «Ախալի դրոյերա» («Նոր ժամանակ»), «Զվենի ցիոնվերա» («Մեր կյանքը»), «Դրո» («Ժամանակ»):

Այդ ժամանակին ե վերաբերում Ստալինի «Անարխիզմ ու սոցիալիզմ» հիմնալի հոդվածների սերիան, վորոնք դրված են Անդրկովկասում անարխիստ-կրապուտկինականների ակտիվացման հապակցությամբ: Հեղափոխական ալիքն իջնելու և սկսված ուսակցիայի պայմաններում որպահպետի մեջ դրվեց, վորոնք անմիջական կուսակցական ինտիր, բոլշևիզմի թեորիական հիմունքների պաշտպանու-

թյունը: Այդ տարիներում Լենինը գրում է իր «Մատերիալիզմ» և եմպիրիոկրիտիզմիմ» հանձարեղ աշխատությունը: Մարքսիզմի թեորիական հիմունքները պաշտպանելու յեղուրս գալիս նաև Ստալինը: Իր հոդվածներում Ստալինը պաշտպանում և զարգացնում է մարքսիստական կուսակցության թեորիական հիմունքները—դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը: Ստալինի այդ հոդվածները հրապարակվեցին 1906—1907 թ. թ. Անդրկովկասի բոլշևիկյան լրագրերում: Նրանց մեջ մատչելի ու մասսայական ձեռվ բացատրվում է, թե ինչ ե մատերիալիզմն ու դիալեկտիկան, ինչ ե պատմական մատերիալիզմը: Բացառիկ խորությամբ դրված ու լուծված են այդ աշխատության մեջ մարքսիստական-լենինյան թեորիայի արմատական հարցերը—սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատորակելիությունը, մարտական կուսակցության, նոր տիպի, հին, և ինուրնացիոնալի ռեֆորմիստական կուսակցություններից տարբեր կուսակցության անհարաժեշտությունը, շարադրվում են կուսակցության ստրատեգիայի և տակտիկայի հիմունքները: Ստալինի այդ հոդվածները մահում են մեր կուսակցության իդեալիան գանձարանը վորպես մի լուրջ ներդրում մարքսիզմ-լենինիզմի թեորիայի մեջ: Դրանք մարքսիզմ-լենինիզմի թեորիայի հարցերը պրոլետարիատի հեղափոխական դասակարգային պայքարի կենսական ինդիքների հետ անխպելի կապակցությամբ խորը կերպով լուսարանելու որինակ են:

1907 թ. ապրիլ-մայիսին կայացավ ՌՍԴԲԿ Կ (Լոնդոնի) համագումարը, վորուարապնդեց բոլշևիկների հաղթությունը մենշևկների դեմ: Ստալինը համագումարի ակտիվ մասնակիցն է: Համագումարից վերաբանալուց հետո նա հրապարակում է Համագումարի աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն—«Պատգամավորի հուշերը», վորի մեջ տվեց Համագումարի վորոշումների ու հանրագումարների դնահատականը, պաշտպանեց բոլշևիկյան իդեալիան

ու տակուկական գիրքերը, մերկացրեց մենչեւկների լիբերալ-բուռժուական գիծը հեղափոխության մեջ և նրանց լիկվիդատորությունը կուսակցության նկատմամբ, ցույց տվեց մենշևիդմի դասակարգային բնույթը, վորպես մանր-բուռժուական քաղաքական հոսանք:

III

Առաջին ուսւական հեղափոխությունը պարտությամբ վերջացավ: Առաջին հեղափոխությունը վերջանալուց մինչև յերկրորդ հեղափոխությունն սկսվելն անցավ 10 տարի, վորի ընթացքում բոլշևիկները հերոսաբար ու անձնազրհաբար, համառ ու անխոնչ կերպով կազմակերպում ելին մասսաներին, դաստիարակում ելին նրանց հեղափոխական վորով, գեկավարում ելին նրանց պայքարը, կոռում ելին հեղափոխության գալիք հաղթությունը:

Ենինի և Ստալինի համար դրանք անեկալ հեղափոխական կուսակցությունը պահպանելու և ամրացնելու, բոլշևիկյան գիծը նոր պայմաններում կիրառելու նախատակով մղվող անհաշտ պայքարի տարիներ ելին, բանվորական մասսաներին կազմակերպելու և դաստիարակելու լրաված աշխատանքի տարիներ, ցարական վոստիկանության դեմ մղվող առանձնապես համառ պայքարի տարիներ: Յարիզմն զգում եր, վոր հանձին Ստալինի նա գործ ունի մի խոչընազույն հեղափոխական գործչի հետ, և ամեն կերպ ձրդում եր Ստալինին զրկել հեղափոխական աշխատանք կատարելու հնարավորությունից: Զերբակալումները, բանան ու աքսորը հաջորդում ելին մեկը մյուսին: 1902-ից մինչև 1913 թվականը Ստալինն ութ անդամ ձերբակալվեց, յոթ անդամ աքսորում յեղավ, վեց անդամ փախավ աքսորից: Յարական ոպրեչներիները հաղիս ելին Ստալինին նոր աքսորավայրը հասցնում, յերբ նա նորից է փախչում և կրկին «ազատության» մեջ կոփում և մասսաների հեղափոխական եներդիան: Միայն վերջին աքսորից Ստալինին 1917 թվականի վետրվարյան հեղափոխությունն աղատեց:

1907 թվից սկսվում է Ստալինի հեղափոխական գործունեյության Բագվի շրջանը: ԱՄԴԲԿ Վ (Լոնդոնի) համագումարից վերադառնալով՝ Ստալինը թողնում է Թիֆլիսը և կուսակցության կամքով հաստատվում է Բագվում—Անդրկովիասի ամենախոշոր արդյունաբերական ույացնում և Ռուսաստանի բանվորական շարժման կարևորագույն կենտրոնում: Այսուղ նա Բագվի կազմակերպությունը լենինի լուսունդների շուրջը համախմբելու, բանվորական մասսաներին բոլշևիզմի զրոշի տակ նվաճելու յեռուն աշխատանք և կատարում: Ստալինը պայքար և կազմակերպում դուրս մղելու մենշևիկներին Բագվի բանվորական ույացներից (Բալախանի, Բիբի-Հեյրաթ, Սև քաղաք, Սպիտակ քաղաք): Ստալինը զեկավարում է բոլշևիկյան անկեղալ ու լեզու որդանները («Բակինցի պրոլետարի», «Գուճու», «Բակինցի ռաբочի»): Ստալինն ուղղություն և տալիս Բագվի բանվորների պայքարին: Բանվորների և նավթարդյունաբերությունների միջև կոլեկտիվ պայմանագիր կնքելիս տեղի ունեցող խորհրդակցության շուրջը ծավալված մեծ կամպանիայի նրա զեկավարությունը անկեղալ ու լեզականատանքի զուգորդման լենինյան ճկուն գիծ կիրառելու մի փայլուն որինակ է: Վարպետորեն կիրառելով ցարական միավետության գեմ քաղաքական պայքար մղելու համար բանվորական մասսաներին մորիթիզացիայի յենթարկելու լենինյան տակտիկան, Ստալինը բոլշևիկների հաղթություն ձեռք բերեց այդ կամպանիայում: Ստոլիպինյան ռեակցիայի մուայլ դիչերին պրոլետարական Բագվուն շտեսնված տեսարան և ներկայացնում, ծավալվում է պրոլետարական պայքարը, ամբողջ Ռուսաստանով մեկ թնդում և ստալինյան ծնունդ—բոլշևիկյան լեզակ լրագրերի ձայնը: «Մասսայական քաղաքական դործադրությի վերջին մոհիկանները»¹ այսպես և բնութագրում լենինը Բագվի բանվորների հեռուսական պայքարը 1908 թվին:

Ստալինն իր շուրջն է համախմբում փորձված բոլշևիկ-

1. Ենինի, հ. XV, էջ 33:

լենինյանների մի ամուր կորիզ—Ռըջոնիկիձեն, Վորոշիլով, Զափարիձեն, Շահումյան, Սպանդարյան և այլն։ Ստալինը վերջիվերջո բոլցելովի լիակատար հաղթանակ է ձեռք բերում Բագվի կազմակերպության շարքերում։ Բազուն փոխարկվում է բոլցելովի միջնաբերդի։ Ստալինի զեկավարությամբ Բագվի պրոլետարիատը հերոսական պայքար և մզում՝ դժումելով համառուսական հեղափոխական շարժման առաջին շարքերում։

Բագվի ժամանակաշրջանը խոչորագույն նշանակություն ունի Ստալինի կյանքի ու գործունեյության մեջ։ Ահա ինչ և ասում Ստալինն այդ շրջանի մասին։

«Նախթային արդյունաբերության բանվորների շրջանում կատարած հեղափոխական աշխատանքի յերկու տարին կոփեց ինձ վորակես պրակտիկ մարտիկի և պրակտիկ դեկավարներից մեկի։ Շփմելով Բագվի այնպիսի առաջավոր բանվորների հետ, ինչպես Վացեկը, Սարատովեցը և ուրիշները, մի կողմից, և բանվորների ու նախթարդյունաբերողների միջև ծագող ամենախորը կոնֆլիկտների փոթորկի մեջ մյուս կողմից, յես առաջին անգամ իմացա, թե ինչ և նշանակում բանվորների մեծ մասսաներ դեկավարել։ Այնտեղ, Բագվում, յես ստացա, այսպիսով, իմ յերկրորդ մարտական հեղափոխական միրտությունը»¹։

1908 թ. մարտի 25-ին Ստալինին ձերբակալում և համարյա ութ ամսվա բանտարկությունից հետո յերկու տարով աքսորում են Վոլոգդայի նահանգը, Սոլլիչենդումսկ։ 1909 թ. հունիսի 24-ին արդեն նա փախչում և Բագու յեմերագանում անլեզարտ աշխատանքի։ Ստալինն ամրողապես պաշտպանում է Լենինի դերքը, վճռապես հանդես և դալիս լիկվիդատորների և ոտղովիստների դեմ։ Կուսակցական կենտրոնական մամուլում լույս են տեսնում ստալինյան պատմական «Նամակներ Կովկասից»։ Դրանք պարունակում են լիկվիդատորների ջախջախիչ քննադատությունը։ Թիվ-

¹ «Правда» № 136, 16 հունիսի 1926 թ.։

լիսի մենշևիկների որինակով մերկացվում և լիկվիդատությունների ունեցածատությունը ծրագրային ու տակտիկական հարցերում։ Այդ նամակները խիստ զատապարտում են տրոցկիզմի աջակիցների դավաճանական վարքադիմը և առաջադրում են հերթական այն խնդիրները, վորոնք հետո իրադրծվեցին Պրագայի կուսակցական կոնֆերենցիայում։ Համակուսակցական կոնֆերենցիայի գումարում, լեզու կուսակցական լրագրի հրատարակում և անլեզարտ պրակտիկ կուսակցական կենտրոնի ստեղծում Ռուսաստանում։

1910 թվականի մարտի 23-ին Ստալինին կրկին ձերբակալում են Բագվում և կես տարվա բանտարկությունից հետո հետ են ուղարկում աքսորավայրը՝ Սոլլիչենդումսկ։ Աքսորում Ստալինը կապ է հաստատում Լենինի հետ, 1910 թվի վերջին նրան մի նամակ և գրում, վորի մեջ ամբողջովին պաշտպանում և անլեզարտ պրոլետարական կուսակցությունը պահպանելու և ամբապնուելու կողմնակիցների կուսակցական բլոկի լենինյան տակտիկան, խիստ մտակում և դաշտաճան ծրոցկու «Հուսած անսկզբունքայությունը», առաջադրում և Ռուսաստանում կուսակցության աշխատանքը կազմակերպելու պլանը։

1911 թ. ամառվա վերջին ընկեր Ստալինը յերրորդ փախուստը կատարեց աքսորից և յեկավ Պետերբուրգութ։ Ընկեր Ստալինը Պետերբուրգում կազմակերպում և զեկավարում և պայքարն ընդունի լիկվիդատոր-մենշևիկների ու տրոցկիստների, համախմբում և ամրացնում և Պետերբուրգի բոլցիկյան կազմակերպությունները։ 1911 թ. սեպտեմբերի 24-ին Ստալինը Պետերբուրգում ձերբակալեց և աքսորվեց Վոլոգդայի նահանգը, վարտեղից նրան հաջողվեց փախչել 1912 թվականի փետրվարին։

1912 թ. հունվարին տեղի յետնենում մի խոչորագույն զեպք կուսակցության կյանքում։ ՈՄԴԲԿ Պրագայի կոնֆերենցիան, կուսակցությունից վոնդերով մենշևիկներին, նորտիպի, կուսակցության, լենինիզմի կուսակցության, բոլցիկյան կուսակցության սկիզբը դրեց։

Բոլշևիկներն այդպիսի կուսակցություն, նոր տիպի կուսակցություն ելին պատրաստում դեռ հին «Искра»-ի ժամանակներից սկսած։ Նրանք այդ կուսակցությունը պատրաստում ելին համառորեն, հաստատակամ կերպով, կանգ չառնելով և վոչ մի բանի առաջ։ «Եկոնոմիստների», մենչեւիների, տրոցիստների, ստղովիստների, ամեն դույնի իդեալիստների—ընդհանուր մինչեւ ևմպիրիոկրիտիկները—դեմ մղած պայքարի ամրող պատմությունը հենց այդպիսի կուսակցություն պատրաստելու պատմություն եր։ Նախապատրաստական այդ աշխատանքի մեջ հիմնական ու վճռական դեր խաղացին լենինի այնպիսի աշխատությունները, ինչպէս «Ի՞նչ անել», «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ», «Սոցիալ-դեմոկրատիայի յերկու տակարիկան գեմոկրատական հեղափոխության մեջ», «Մատերիալիզմ և ևմպիրիոկրիտիզմ»։ Ստալինը լենինի հալատարիմ զինակիցն եր բազմաքիվ թշնամիների դեմ մղվող այդ պայքարում, հաստատուն հենարանը հեղափոխական մարքսիստական կուսակցություն, բոլշևիկյան կուսակցություն ստեղծելու համար մղվող պայքարում։

IV

Պրագայի կոնֆերենցիան իր վորոշումների մեջ նախագուշակեց հեղափոխական վերելքի անխուսափելիությունը մոտիկ ապագայում և բոլոր միջոցները ձեռք առավ, վորուելի կուսակցությունը կազմ ու պատրաստ դիմավորի այդ վերելքին։ Կոնֆերենցիան բոլշևիկյան կենտրոնական կոմիտե ընտրեց, գործնական կենտրոն ստեղծեց Ռուսաստանում հեղափոխական աշխատանքը զեկավարելու համար (Կենտկոմի Ռուսական բյուրոն), վորոշում ընդունեց «Правда»-ն հրատարակելու մասին։ Կոնֆերենցիան հեռակայությամբ կուսակցության կենտրոնի անդամ և ընտրում Ստալինին, վորն արդեն 1910 թ. սկսած կենտկոմի գործակալն եր։ Ստալինը լենինի առաջարկով գլխավորում է կե-ի Ռուսական բյուրոն։ Բայց Ստալինը գտնվում եր աքսորում, պետք

եր նրա վախուսար կազմակերպել։ Լենինի հանձնարարությամբ Ստալինի մոտ Վոլոդյա յե գալիս Սերգո Ռոջոնիկի-ձեն, նրան ինքորմացիա յե տալիս Պրագայի կոնֆերենցիայի վորոշումների մասին։ Յել 1912 թ. վետրվարի 29-ին Ստալինը նորից վախչում է աքսորից։ «Ազատության» մեջ գտնվելու կարծ ժամանակում Ստալինը յեռանդուն գործունեյություն է ծավալում, Կենտկոմի հանձնարարությամբ շրջում է Ռուսաստանի կարևորագույն շրջանները, հերթական «մայուլիկայի» նախապատրաստական աշխատանք է կատարում, գրում է Կենտկոմի մայիսինեկան հայտնի թուուցիկը, զեկավարում է Պետերբուրգի բոլշևիկյան շաբաթաթերթ «Յանայի գործադուլների որերին»։

Բոլշևիկյան կուսակցության ձեռքին իր կազմակերպություններն ամրացնելու և մասամբ դեմ աղղեցություն նվաճելու մի հզոր զենք եր ամենորյա մասայական բոլշևիկյան «Правда» լրագիրը, վոր լույս եր տեսնում Պետերբուրգում։ Նա հիմնվեց լենինի ցուցումի համաձայն, Ստալինի նախաձեռնությամբ։ Ստալինի զեկավարությամբ լինի նախաձեռնությամբ։ Ստալինի պեկալարությամբ պատրին վորոշեց մայիսի 5-ը բանվորական մամուլի տոնի որ համարել։

«1912 թվականի «Правда»-ն հիմքի կառուցումն եր բոլշևիզմի 1917 թ. հաղթության համար»—գրում եր Ընկեր Ստալինը «Правда»-ի տասնամյակի որը¹։

1912 թ. ապրիլի 22-ին Պետերբուրգում Ստալինին ձերքակալեցին վորոշում և միքանի ամայլա բանտարկությունից հետո աքսորեցին այս անդամ ամելի հեռու—Նարիմի յերկրամասը յերեք տարով։ Բայց արդեն 1912 թ. սեպտեմ-

¹ «Правда» № 98, 5 մայիսի 1922 թ.։

բերի 1-ին Ստալինը նորից վախչում եւ աքսորից Պիտեր։ Այստեղ նա խմբագրում եւ բոլշևիկյան «Звездա» և «Правда» լրագրերը, զեկալարում եւ բոլշևիկների գործունեյությունը Խ Պետական Դումայի ընտրական կամպանիայի ընթացքում։ Վոստիկանության կողմից քայլ առ քայլ հետապլընդիկով՝ Ստալինը մեծ ոխուով հանդես եւ զալիս գործարաններում տեղի ունեցող մի շարք թուուցիկ ժողովներում։ Բայց բանվորական կազմակերպությունները և իրենք՝ բանվորները պահպանում են Ստալինին և նրան պաշտպանում վոստիկանությունից։

Կուսակցության հաղթությամբ պսակված այդ կամպանիայի մեջ խոչորագույն գեր խաղաց Ստալինի գրած «Պետերբուրգի բանվորների նակազն իրենց բանվորական դեպուտատին», վորին այնքան բարձր գնահատական և տվել Լենինը։ «Նակազը» տպագրելու համար տպարան ուղարկելով՝ Լենինը գրում եր. «Անպայման վերադաշնել!! Զեղոտուել։ Զափազանց կարևոր և աղահել այս փաստաթուղթը։ «Правда»-ի խմբագրությանն ուղղած նամակում Լենինը մատնանշում եր. «Անպայման գետեղեցեք այս նակազը Պետերբուրգի դեպուտատին՝ աչքի ընկնող տեղում խոսոր տառերով»¹։ Ստալինյան նակազը հիշեցնում եր բանվորներին 1905 թվականի չորսված խորինների մասին և նրանց կոչ եր անում հեղափոխական պայքար մղել, յերկու ճակատով պայքար մղել—ինչպես ցարական կառավարության դեմ, այնպես ել ցարիկմի հետ համաձայնություն փնտող լիերալ բուրժուազիայի դեմ։ Բնարություններից հետո Ստալինը Դումայի ֆրակցիայի բոլշևիկյան մասի զեկալարման աշխատանք և կատարում։ Ստալինի հետ միասին Պիտերում աշխատում եւ Մոլոտովը, վորն ակտիվ կերպով մասնակցում է «Правда»-ի ընտրական կամպանիայի և Դումայի ֆրակցիայի զեկալարությանը։ Այդ շրջանում Լենինի և Ստալինի միջև ել ավելի սերտ կապ եւ հաստատվում։ Իր նամակներում Լենինը լիովին հավանություն եւ տալիս Ստալինի

գործունեյությանը, նրա յերույթներին, նրա հոգվածներին։ Ստալինը յերկու անգամ գնում է կրակով Լենինի մոտ—1912 թվին նոյեմբերին և դեկտեմբերի վերջին կենտկոմի և կուսակցական աշխատողների միատեղ խորհրդակցությանը։

Արտասահմանում յեղած ժամանակ Ստալինը գրում է «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատությունը, վորը Լենինը շատ բարձր եր գնահատում։ Ընկեր Ստալինի այդ աշխատության մասին Լենինը գրում եր. «Թեորիական մարքսիստական գրականության մեջ... ուղարկած հիմունքներն արդեն լուսաբանվել են վերջին ժամանակներս (առաջին հերթին այստեղ առաջ և քաշվում Ստալինի հոգվածը)»¹։ Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատությունը բոլշևիզմի մի խոչորագույն յելույթն եր ազգային հարցի մասին միջազգային ասպարեզում մինչև պատերազմը։ Այդ՝ բոլշևիզմի ծրագրային դիկտատորացիան եր ազգային հարցը մասին։ Սուր և ուժեղ կերպով այդ աշխատության մեջ հակադրվեցին յերկու մեթոդ, յերկու ծրագրի, յերկու աշխարհայցք ազգային հարցում—II ինտերնացիոնալինը և լենինիզմինը։ Ստալինը Լենինի հետ միասին ջախջախեց II ինտերնացիոնալի ոպորտունիստական հայացքներն ու դոգմաներն ազգային հարցի մասին։ Լենինն ու Ստալինը մշակեցին մարքսիստական ծրագրին ազգային հարցի մասին։ Իր աշխատության մեջ Ստալինը տվեց ազգի մարքսիստական թեորիան, ճեակերպեց ազգային հարցի լուծմանը ցույց տրվող բոլշևիկյան մոտեցման հիմունքները (ազգային հարցը պետք եւ քննարկել վորպես պրոլետարական հեղափոխության ընդհանուրը հարցի մի մասն իմպերիալիզմի դարաշընչանի ամբողջ միջազգային իրադրության հետ անխղելի կապակցությամբ), հիմնավորեց բանվորների ինտերնացիոնալ համախմբման բոլշևիկյան սկզբունքը։

1913 թ. փետրվարի 23-ին Ստալինը ձերբակալեց բոլշևիկների Պետերբուրգի կոմիտեյի կողմից Կալաչնիկովյան

¹ Լենին, հ. XXIX, էջ 78։

բորսայի գահինում կազմակերպված համերգի ժամանակի : Այս անգամ ցարական կառավարությունը Ստալինին աքսորում է հեռավոր Տուրուսանյան յերկրամասը չորս տարով : Ստալինն սկզբում ապրում է կոստինո կայանում, իսկ հետո, 1914 թ. սկզբին ցարական ժանդարմերը, նոր փախուստից վախենալով, նրան փոխադրում են ե'լ ավելի հյուսիս-կուրեյկա կայանը, բեռուային շրջանին մոտելի : Այստեղ նա անց է կացնում 1914, 1915 և 1916 թ. թ. : Այդ ամենածանր քաղաքական աքսորն եր, վորավորին միայն կարող եր լինել խորը սիրելոյան հեռաստանում :

1914 թ. ամառն սկսվեց առաջին խմբերի համար առաջարկան սպատերազմը : Այստերնացիոնալի կուսակցությունները խայտառակ կերպով դավաճանեցին սլրուետարիատին, անցան խմբերի ալիքան բուրժուազիայի կողմը : Միայն Լենինը, բոլշևիկները հավատարիմ մնացին ինտերնացիոնալիզմի մարտական դրոշին, միայն բոլշևիկների կուսակցությունը միանդամից և առանց տատանմելու վճռական պայքարի դրոշը բարձրացրեց խմբերի համար ապատերազմի դեմ : Ամբողջ աշխարհից կտրված, Լենինից ու կուսակցական կենտրոններից կտրված, Ստալինը լենինյան ինտերնացիոնալիստական դիրք եր բոնում պատերազմի, հաշուության և հեղափոխության հարցերում : Նա նամակ է գրում Լենինին (1915 թ.), հանդես է դալիս աքսորական բոլշևիկների ժողովում Մոնաստիրսկոյե գյուղում (1915 թ.), վորտեղ խայտառակությամբ և նշալվակում Կամենեվի վախկոտ ուղավաճանական վարմունքը բոլշևիկյան «Հնդյան»—Դ Պետական Դումայի դեպուտատների դատավարության ժամանակի : Նա վողջունում է (1916 թ.) մի խումը աքսորական բոլշևիկների հետ «Вопросы страхования» լեզար բոլշևիկյան ժուռնալը, մատնանշելով, վոր ժուռնալի խնդիրն եղործ դնել «բոլոր ուժերն ու ջանքերը նաև իդեալիս ապահովելու համար մեր յերկրի բանվոր դասակարգին պ. պ. Պոտրեսովների, Լեվիցեկների և Պիեխանովների խորապես այլասերող, հակառակությունական և միջազգայնական սկզբունքների հիմնովին հակասող քարողից» :

1916 թվականի դեկտեմբերին Ստալինն ետապով ուղարկվում է Կրասնոյարսկ, իսկ հետո Աչինսկ քաղաքը : Այստեղ նա ստանում է փետրվարյան հեղափոխության լուրը : Շուտով Ստալինը դուրս է դալիս Աչինսկից, ճանապահությունը վողջունի հեռագիր և ուղարկում Շվեյցարիա Լենինին :

1917 թ. մարտի 12 (25)-ին Ստալինը, արիաբար տանելով Տուրուսանյան աքսորի բոլոր դժվարությունները, նորից Պիտերում—Ռուսաստանի հեղափոխական մայրաքաղաքում է : Նույն այդ օրը կուսակցության կենտրոնը Ստալինին և հանձնում «Правда» լրագրի ղեկավարությունը :

Բոլշևիկների կուսակցությունը գեռ նոր եր գուրս յեկել ընդհատակից : Կուսակցության ամենից աչքի ընկնող ու ակտիվ անդամներից շատերը վերաբառնում եյին հեռագիր աքսորավայրերից ու բանտերից : Լենինը գտնվում եր եմիգրացիայում : Բուրժուական ժամանակավոր կառավարությունն ամեն կերպ կասեցնում եր նրա գալուստը : Այդ պատասխանատու շրջանում Ստալինը կուսակցությանը համախմբում և պայքարելու համար հանուն բուրժուական գեմոկրատական հեղափոխության վերաճման սոցիալիստականի : Ստալինը ղեկավարում է բոլշևիկների կենտրոնական կոմիտեյի և Պետերբուրգի կոմիտեյի գործունեյությունը : Ստալինի հոգվածներում բոլշևիկներն սկզբունքային ղեկավար ցուցումներ են ստանում իրենց աշխատանքի համար : «Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհրդների մասին» առաջին խակ հոգվածում Ստալինը գրում եր կուսակցության հիմնական ինդրի մասին :

«Ամրացնել այդ Խորհուրդները, դրանք դարձնել համատարած, դրանք կապել միմյանց հետ Բանվորների և Զինվորների Դեպուտատների կենտրոնական Խորհրդի՝ վորպես ժողովրդի հեղափոխական իշխանության որդանի՝ գլուխավորությամբ»¹ :

Ստալինը ցույց տվեց, վոր խմբերի համար առաջ-

¹ Լենին—Ստալին. Избранные произведения 1917 года. 1937 թ., էջ 11:

րազմի բնույթը չփոխվեց իշխանությունը՝ ժամանակակիցոր կառավարության ձեռքն անցնելուց, վոր 1914—1917 թ.թ. պատերազմը բուրժուական ժամանակակիցոր կառավարության որով ել մնում ե թալանչիական, անարդարացի պատերազմ։

Ստալինը, Մոլոտովը և մյուսները կուսակցության մեծամասնության հետ միասին պաշտպանում ելին խմբերիալիստական ժամանակակիցոր կառավարությանն անվտանությամբ վերաբերվելու քաղաքականությունը, հանդես ելին գալիս մենչեւկեսերական պաշտպանողականության դեմ և ժամանակակիցոր կառավարությանը պայմանական պաշտություն ցույց տալու կիսամենչեւկելյան այն դիրքի դեմ, վոր բոնել ելին կամենելին ու մյուս ոպրոտունիստները։

Վ

1917 թ. ապրիլի 3 (16)-ին, յերկար արտաքսումից հետո, Ռուսաստան վերաբարձավ Լենինը։ Հեղափոխության սիրելի առաջնորդի ժամանելու լուրը Պետերբուրգի առաջավոր բանվորները հրճվանքով ընդունեցին։ Լենինին դիմավորելու համար Բելոռոտովի կայարանը գնաց ընկեր Ստալինը բանվորների պատգամավորության հետ միասին։ Լենինի դիմավորումը Պետրոգրադի Ֆինլանդական կայարանում հեղափոխական հուժկությունը ցույցի բնույթը ընդունեց։ Դալու յերկրորդ օրը Լենինը հանդես յեկավ իր հոչակավոր Ապրիլյան թեղիսներով, վորոնք կուսակցությանը տվին բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցնելու համար մզվելիք պայքարի հանձարեղ պլանը։ Լենինի թեղիսները կուսակցությանը նոր կողմնորոշում պայքարի նոր պայմաններում ցարկովի տապալումից հետո։ 1917 թ. ապրիլի 24-ին բացվեց բոլշևիկների VII (Ապրիլյան) կոնֆերենցիան, վորի աշխատանքների հիմքը լենինյան թեղիսները կազմեցին։ Ապրիլյան կոնֆերենցիան կուսակցության առաջնապատակ դրեց պայքարել բուրժուական-դեմոկրատական

հեղափոխությունը՝ սոցիալիստական հեղափոխության վերամեջու համար։

Կոնֆերենցիայում Ստալինը, պաշտպանելով Լենինի գիծը, վճռական հակահարված տվեց կապիտալիզմի քողարկված պաշտպանները կամենելին և միկոլին։ Ստալինը կոնֆերենցիայում հանդես յեկավ ազգային հարցում, Ստալինը հիմնայութեց բոլշևիկյան ազգային քաղաքականությունը, պաշտպանեց ազգերի ինքնուրոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատվելու ու ինքնուրույն պետություն կազմելը։ Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը կուսակցության համար ապահովեց ճնշված ազգությունների պաշտպանությունը Հոկտեմբերյան Մեծ սոցիալիստական հեղափոխության մեջ։

1917 թ. մայիսին, կոնֆերենցիայից հետո հիմնվում է կենտկոմի Քաղբյուրոն, վորի կազմի մէջ ե ընտրվում Ստալինը վորովես նրա անդամ։ Այդ ժամանակվանից և մինչև այժմ Ստալինն անընդհատ ընտրվում է կենտկոմի Քաղբյուրոյի անդամ։

Կուսակցությունն, Ապրիլյան կոնֆերենցիայի վորոշումների հիման վրա, մասսաներին նվաճելու, նրանց մարտական դաստիարակման ու կազմակերպման հսկայական աշխատանք ե ծավալում։

Հեղափոխության այդ բարդ ըրջանում, յերբ իրադարձությունները սրբնիքաց առաջ ելին գնում, կուսակցությունից հմուտ, ճկուն տակտիկա պահանջելով, Լենինը Ստալինի հետ միասին դեկավարում ե մասսաների պայքարը։

«Յես հիշում եմ 1917 թվականը,—ասում եր Ստալինը, —յերբ յես կուսակցության կամքով, բանտերում ու աքսորավայրերում թափառելուց հետո, ուղարկեցի Լենինգրադ։ Այստեղ, սուս բանվորների շրջանում, բոլոր յերկրների պրոլետարիների մեծ ուսուցչի—ընկեր Լենինի հետ

անմիջական մոտելկությամբ, պրոլետարիատի ու բուրժուա-
զիայի մեծ գոտեմարտերի վոթորկի մեջ, խմաբերիալիստա-
կան պատերազմի, պարմաններում, յես առաջին անգամ սո-
վորեցի հասկանալ, թե ինչ է նշանակում բանվար դասա-
կարգի մեծ կուսակցության ղեկավարներից մեկը լինել:
Այսուղ, ուսւ բանվորների—մնշված ազգերի ազատարար-
ների և բոլոր յերկրների ու ժողովուրդների պրոլետարա-
կան պայքարի նախամարտիկների շրջանում, յես ստացա իմ
յերրորդ մարտական հեղափոխական մկրտությունը: Այս-
տեղ, Ռուսաստանում, Լենինի ղեկավարությամբ, յես դար-
ձա հեղափոխության վարպետներից մեկը»¹:

Ստալինը կուսակցության ամբողջ գործնական աշխա-
տանքի կենտրոնում է: Վորպես կենտկոմի անդամ, նա ան-
միջական ղեկավար մասնակցություն և ունենում կուսակ-
ցության Պետրովրադի կոմիտեյի աշխատանքներում, ղե-
կավարում և «Պրաւա»-ն, հոդվածներ և գրում «Պրաւա»-
յում և «Солдатская Правда»-յում, ղեկավարում և բոլ-
շևիկների գործունեյությունը մունիցիպալ կամպանիայի
ժամանակ Պետրովրադում: Լենինի հետ միասին Ստալինը
մասնակցում է կուսակցության վիճակական կազմակեր-
պությունների Համառուսական կոնֆերենցիայի աշխատանք-
ներին, հանդես և գալիս այնանց ղեկուցումով: Լենինի հետ
միասին Ստալինը կազմակերպում է հունիսի 18-ի պատմա-
կան ցույցը, վորոն անցավ բոլշևիկյան կուսակցության լո-
կունքներով, կենտկոմի անունից գրում և Պետրովրադի
բանվորներին ու հեղափոխական զինվորներին ուղղված դի-
մումը:

1917 թ. հուլիսյան որերից հետո, յերբ Լենինը հալած-
ված ու հետափնդված հակահեղափոխական ժամանակավոր
կառավարության կողմից, գտնվում եր ընդհատակում,
Ստալինն անմիջաբար ղեկավարում եր կուսակցության
կենտրոնական կոմիտեն և կուսակցության կենտրոնական
որդանը, վոր այդ ժամանակ լույս եր տեսնում զանազան

անուններով («Рабочий и солдат», «Пролетарий», «Рабо-
чий», «Рабочий путь»): Ստալինը մեր կուսակցության հա-
մար, մեր ժողովրդի համար, ամրող մարդկության հա-
մար փրկեց լենինի թանգարքին կյանքը, վճառականական
վեմ արտահայտվելով՝ հակահեղափոխականների դատարա-
նին լենինի ներկայանալուն, դիմագրելով դավաճաններ կա-
մենելի, Ռիկովի, Տրոցկով՝ հակահեղափոխական ժամանա-
կավոր կառավարության դատարանին լենինին հանձնելու
առաջարկին:

Հուլիսյան ցույցի ջախջախումը բեկում առաջացրեց Հե-
ղափոխության զարգացման մեջ: Լենինը մշակում է կու-
սակցության նոր տակտիկան պայքարի նոր պայմաննե-
րում: Սվերդլովի հետ միասին Ստալինը ղեկավարում եր
կուսակցության VII անդադալ կերպով նիստեր գումարող հա-
մագումարի աշխատանքները (1917 թ. ոգոստոս): Համա-
գումարում Ստալինը հանդես յեկավ կենտկոմի քաղաքա-
կան հաշվետվությամբ և քաղաքական դրության հարցե-
վերաբերյալ ղեկուցումով: Այդ ղեկուցումների մեջ Ստալի-
նը հաստեկուեն ձեսկերպության խնդիրներն ու
տակտիկան սոցիալիստական հեղափոխության համար մըլ-
լուղ պայքարում: Ստալինը հակահարված տվեց արողիկիստ-
ներին, վորոնք անհնարին եյին համարում սոցիալիզմի
հաղթությունը խուսաստանում: Համագումարը համախամբեց
Ստալինի շուրջը, վորը պաշտպանում եր լենինի ուսմուն-
քը սոցիալիզմի հաղթության հնարավորության մասին մեր
յերկրում: Ստալինի ղեկավարությամբ, լենինի դիրեկտիվ-
ներով, կուսակցության VII համագումարը գարձակ ապրու-
տամբության նախապատրաստվելու համագումարը: Համա-
գումարը կուսակցության առաջ նպատակ դրեց զինված
ապատամբություն, վորուետարիատի դիրեկտուրայի նվա-
ճում:

1917 թ. ոգոստոսին բոնկիեց գեներալ կոռնիլովի խոռ-
վությունը, վորը մտադիր եր ցարիզմը վերականգնելու
խուսաստանում: Բոլշևիկները ժողովրդական մասսաներին

¹ «Правда» № 136, 16 հունիսի 1920 թ.:

վոտքի հանեցին գեներալական ամանայուրայի դեմ կովելու համար։ Կոռնիլովյան խոռվության ջախչախումը մեր շոր ըջան բացեց հեղափոխության պատմության մեջ—սկզբեց գրոհի կազմակերպման ըրջանը։

Լենինը ու Ստալինը համարձակ ու վասահ, հաստատակամ ու շրջահայաց կերպով կուսակցության ու բանվոր դասակարգին տանում ելին դեպի սոցիալիստական հեղափոխություն, դեպի զինված ապստամբություն։ Լենինն ու Ստալինը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության վոգեշնչողներն ու հաղության կազմակերպողներն են։ Ստալինը Լենինի մերձավորագույն գործակիցն է։ Նա անմիջականորեն դեկավարում ե ապստամբության նախապատճեռ ամբողջ գործը։ Նրա դեկավարող հոգածները արտատպում են մարզային բոլշևիկյան լրագրերը։ Ստալինն իր մոտ ե կանչում շրջանային ու մարզային կազմակերպությունների ներկայացուցիչներին, հրահանգում ե նրանց և նշում ե մարտական խնդիրներն առանձին շրջանների համար։ Հոկտեմբերի 16 (29)-ին կենտրոնական Կոմիտեն ընտրեց ապստամբությունը դեկավարող Կուսակցական կենտրոն ընկեր Ստալինի գլխավորությամբ։ Կուսակցական կենտրոնը մտավ Խորհրդային կենտրոնի Ռազմա-հեղափոխական կոմիտեի—կազմի մեջ և նրա հոգին ու սիրտը գարձագ։ Ստալինի դեկավարությամբ մշակվում ե ապստամբության պլանը և նշումը ե ճիշտ ժամկետը։ Հոկտեմբերի 24-ին վաղ առավոտյան կերենսկին Հրաման արձակեց կուսակցության կենտրոնական որդան «Рабочий путь»-ը փակելու մասին և զրահապատճեր ուղարկեց «Рабочий путь»-ի խմբագրության ու տպարանի շենքի մոտ։ Բայց առավոտյան ժամի 10-ի մոտերքն ընկեր Ստալինի ցուցումով կարմիր-դվարդիականներն ու հեղափոխական դիմունները մեջ կառավագանության մասին ու խմբագրության առաջ։ Առավոտյան ժամի 11-ի մոտերքը լույս տեսավ «Рабочий путь»-ը Ստալինի գրած «Մեզ ի՞նչ ե հարկավոր»

առաջնորդող հոդվածով, վորը մասսաներին կոչ եր անում տապալել բուրժուական ժամանակավոր կառավարությունը։ Միաժամանակ, կուսակցական կենտրոնի ցուցումով, շտաբ կարգով գետի Սմոլնի բերդեցին հեղափոխական զինվորների ու կարմիր-դվարդիականների ջոկատները։ Ապրատամբությունն ակալեց և հաղթեց մեկ որում։ Հոկտեմբերի 25-ի յերեկոյան բացվեց Խորհուրդների Ահմագումարը, վորն ամբողջ իշխանությունը հանձնեց Խորհուրդներին։

Ստալինը մտավ Ժողովրդական կոմիսարների առաջին խորհրդի կազմի մեջ, վոր Լենինի գլխավորությամբ ընտրվեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունից հետո Խորհուրդների Համառուսական Ահմագումարում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն արմատագես վոխեց իրադրությունը։ Հոկտեմբերյան հեղափոխությունն ամբողջ աշխարհը պառակտեց յերկու սիստեմի՝ կապիտալիզմի և սոցիալիզմի սիստեմի։ Բոլշևիկների կուսակցությունը նոր պայմանների հանդիպեց, պետք ե նոր վեթխարի խնդիրներ լուծեր։ Արմատագես կոխվեցին նաև բանվոր դասակարգի պայքարի ձեւերը։

Խորհրդային կառավարության գոյության առաջին իսկ որերց և մինչև 1923 թվականը Ստալինն ազդությունների գործերի ժողովրդական կոմիսար եր։ Նա անմիջականորեն զեկավարում եր կուսակցության ու Խորհրդային իշխանության ամբողջ աշխատանքն ազգային հարցը ԽՍՀՄ-ում լուծելու գործում։ Նա գրեց պատմական «Խուսաստանի ժողովուրդների իրավունքների գեկլարացիան», վորը հոչակում եր, թե նոր գարագլուխ ե սկավում ժողովուրդների փոխհարաբերությունների մեջ։ Իշխումի ու յենթարկման, մնացման ու բանության հարաբերություններին փոխարինելու յեկավլիքակառար իրավահամակասարությունը, յեղբայրական վատահությունն ու բարեկամությունը մեր յերկրի ժողովուրդների միջև։ Լենինի և Ստալինի զեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները ցարական գաղութների տեղում ազատ

ծաղկող Խորհրդային հանրապետություններ ստեղծեցին։ Զկա խորհրդային վոչ մի հանրապետություն, վորի կաղմակերպման մեջ Ստալինն ակտիվ ու դեկավար մասնակցություն ունեցած չլինի։ Ստալինը զեկավարում է Ռէկրաֆիական Խորհրդային հանրապետության համար մզկող պայքարը, դեկավարում է Բելոռուսական հանրապետության և Անդրկովկասով ու Միջին Ասիայում Խորհրդային հանրապետություններ ստեղծելու գործը, ոգնում է Խորհրդային յերկրի բարձրաթիվ ազգություններին՝ կառուցելու իրենց ավտոնոմ խորհրդային հանրապետություններն ու մարզերը։ Լենինն ու Ստալինը Մեծ Խորհրդային Միության վողենչողները, կազմակերպողներն ու ստեղծողներն են։

Ստալինը Սվերդլովի հետ միասին Լենինի մերժավորագույն ողնականներն են Խորհրդային պետությունը կառուցելու գործում։ Լենինի հետ միասին Ստալինը պայքար է մզում կամենելի, Զինովյեվի, Միտրովի և հեղափոխության մյուս անարդ շտրայկրեխերների ու դասալիքների դեմ։ Լենինի հիվանդության որերին Ստալինը փոխարինում է նրան Ժողկոմխորհում։ Կերենսկու—Կրամնովի ջախջախման կազմակերպումը, չինովնիկների ու ծառայողների սարսուածի ընկճումը, հակահեղափոխական կայանի և ցարական դեներալիստի լիկիդացիան, բուրժուական մամուլի փակումը, պայքարը հակահեղափոխական Ռէկրաֆիական Ռազմայի դեմ, Սահմանադիր ժողովի ցրումը, 1918 թ. առաջին խորհրդային Սահմանադրության մշակումը—այդ բոլոր մէռական իրադարձությունների մեջ Ստալինն ամենաակտիվ ու դեկավար մասնակցություն ե ունեցել։

Ստալինը կենտրոնի հանձնարությամբ 1918 թ. հունվարին անց է կացնում Յեվրոպայի և Ամերիկայի զանազան յերկրների սոցիալիստական կուսակցությունների հեղափոխական թերկայացուցիչների խորհրդակցությունը, վորը նշանակալից դեր խաղաց III, կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու համար մզկող պայքարում։

Բրեստի հաշտության ծանր որերին, յերբ վճռվում եր

հեղափոխության քախտը, Ստալինը լենինի հետ միասին հաստատակամորեն պաշտպանում է եր բոլշևիկյան ստրատեգիան ու տակտիկան քնողդեմ դավաճան Տրոցկու և նրա արքանյակ Բուլսարինի, վորոնք անդիլիական-Փրանսական իմպերիալիստների հետ միաբանած ուղղում եյին Խորհուրդների յերիտասարդ, չամբապնդլած Հանրապետությունը դերմանական իմպերիալիզմի հարվածի տակ դնել։

VI

Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության կողմից տարալված ուռւական կալվածատերերն ու կապիտալիստներն սկսեցին մյուս յերկրների կալիստալիստների հետ խոռք մեկ անել Խորհուրդների յերկրի դեմ ուազմական ինտերվենցիա կազմակերպելու մասին։ Նրանք նպատակ եյին դրել ջախջանի բանվորներին ու գյուղացիներին, տամալել Խորհրդային իշխանությունը և կրկին ստրկացնել մեր յերկիրը։ Սկսեց քաղաքացիական պատերազմն ու ինտերվենցիան։ Խորհրդային կառավարությունը սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ հայտարարեց և ամբողջ ժողովրդին կոչ արեց պայքարելու։ Բոլշևիկների կուսակցությունը բանվորներին ու գյուղացիներին հայրենական պատերազմի հանեց ընդդեմ ստարերկըյա զավթիչների ու բուրժուական-կալվածատիրական սպիտակ-դվարդիականության։

1918 թ. գարնանը անդրու-Փրանսական իմպերիալիստներ կազմակերպեցին չեխոսլումակների կորպուսի խոռվություն։ այդ կորպուսը կազմված եր ավստրո-հունգարական բանակի սպազմակերիներից և Գերմանիայի հետ հաշտությունը կնքելուց հետո Միքրոբի վրայով Ֆրանսիա յեր անցնում։

Զեխոսլովակների յելույթը, վորի սկսվելու որը նշանակված եյին սպիտակ-դվարդիական-եսերական խոռվություններ Պոլույթյեյի 23 քաղաքներում, ձախ եսերների խոռվությունը Մոսկվայում, անդիլիական դեսանտի ավհանումը Մուրմանսկում—արձակեցին հակահեղափոխության

բոլոր ուժերի կապերը։ Զեխոսը վակների խռովությունը տեղի ունեցավ չափազանց կրտսելական մոմենտում։ Յերկիրը գեռ նոր եր դուրս պրծել իմայերի լիստական պատերազմի ճանկերից։ Կապիտալիստների ու կարվածատերերի տերուտնորինությունը յերկիրը կատաստրոֆայի յեր հասցըրել։ Մայրաքաղաքների բանվորներն որական մեկ-ութերորդ Փունտից ավելի հաց չելին ստանում։ Հանրապետությունը կտրված եր ուկրաինական և սիբիրյան հացից։ Մուռմ եր միայն մեկ մարդ, վորտեղից կարելի յեր հաց ձեռք բերել, — հարավ-արևելքը, Պովոլժյեն և Հյուսիսային Կովկասը, վորոնց ճանապարհն անցնում եր Վոլգայով Յարիցինի վրայով։ Հեղափոխությունը փրկել կարելի յեր միայն հաց ճարելու միջոցով։ Լենինը գիմեց Պետրովբարդի բանվորներին և կոչ արեց արշավ կազմակերպել գետի դյուզեր՝ ողնելու համար գյուղացիական չքայլությանը հացի սպեկուլանաների, կուլակների, պարագիտների գեմ։ Կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից Ստալինը գործուդիեց հարավ վորագես պարենային գործի արտակարգ իրավունքներով ոժաված ընդհանուր ղեկավար Ռուսաստանի հարավում։

1918 թ. հունիսի 6-ին Ստալինը բանվորների մի ջոկատի հետ ժամանեց Յարիցին։ Քաղաքական առաջնորդի խորաթափանցության և զորավարի տաղանդի միացումը մեկ անձի մեջ թույլ տվին Ստալինին համերանալու Յարիցինի՝ վորագես հականեղափոխության կողմից գիմավոր հարվածի յենթակա վայրի գերը։ Յարիցինի գրավումը հանրապետությունը կկարեր հացի վերջին ուսուրոներից, Բագիր նավթից, թույլ տալով սպիտակներին Դոնի հականեղափոխությունը միացնելու չեխոսլույակների հականեղափոխության հետ և ընդհանուր ճակատով դնալու Մոսկվայի վրա։ Պետք եր՝ ինչպես ել լին՝ Խորհրդային իշխանության ձեռքում պահել Յարիցինը։ Յերկաթե ձեռքով մաքրելով քաղաքը սպիտակ-գլարդիական դամառութիւններից, ճարելով և քաղցող մայրաքաղներին զբալի քանակությամբ պարեն։

կելով, Ստալինն ամբողջովին զբաղվեց Յարիցինի պաշտպանությամբ։ Անողոք կերպով ընկճելով Տրոցկու ուղարկած ու պաշտպանած հականեղափոխական մասնակետների դիմադրությունը, Ստալինն արագ ու վճռական միջոցներով վերակադրեց ցիրուցան ջոկատները, արագացրեց Վորոշիլովի դրամակերի ժամանումը, վորոնք նոր կազմված Խ բանակի կորիգը դարձան։ Ստալինի յերկաթե կամքը և հանձարեղ խորաթափանցությունը պաշտպանեցին Յարիցինը, սպիտակներին թույլ չտվին ճեղքել-անցնել Մոսկվան։

Յարիցինի պաշտպանության հերոսական եպոսեան գուգագիրեց վերմանական իմայերի պահպատմի կրախին Ուկրաինայում։ 1918 թ. նոյեմբերին հեղափոխություն բռնկվեց Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում։ Կենտրոնական կոմիտեն Ստալինին հանձնարարում և ուկրաինական ճակատագմակերպել՝ ուկրաինական բանվորներին ու դյուզերիցիներին ողնելու համար։ Ստալինի արամադրության տակ գրուցին Խ բանակից 20 կուսակցական դեկավար աշխատողներ, ընկեր Վորոշիլովի գլխավորությամբ։ Նոյեմբերի վերջերին ուկրաինական ազստամբ զորքերը շարժվեցին պետլյուրականների ու գերմանացիների գեմ, ադատելով Խարկովը։ Արևմուտքում ազստագրվեց Մինսկը։ Ստալինը հսկայական աշխատանք եր կատարում արևմտյան մարզերն աղատելու և Բելոռուսական հանրապետություն ստեղծելու ուղղությամբ։

1918 թ. նոյեմբերի 30-ին ստեղծվեց Բանվորական ու Գյուղացիական Պաշտպանության Խորհուրդը Լենինի գլխավորությամբ՝ պաշտպանության ամբողջ աշխատանքը ճակատում ու թիկունքում դեկավարելու, արդյունաբերությունն ու արանսպորտը մորիլիզացիայի յենթարկելու համար։ Կրի բոլոր միջոցները մորիլիզացիայի յենթարկելու համար։ Վորագես համառուսական կենտրոնակոմի ներկայացուցիչ Պաշտպանության Խորհրդի մեջ մտցվեց Ստալինը, վորը փաստորեն զբարձավ Լենինի տեղակալը։

1918 թ. վերջերին կատաստրոֆիկ դրություն ստեղծ-

վեց Պերմի ճակատում։ Կոլչակի բանակն շոապում եր միանալ հյուսիսից հարձակվող անդիմական զորքերի հետ։ Պաշտպանության Խորհրդի անունից լենինը պահանջում եր ամբացնել դրությունը Պերմի մոտ։ Կատասրության լիկվիդացիայի յենթարկելու համար նա կենտրոնական կոմիտեին առաջարկեց ուղարկել Ստալինին և Զերժինսկուն։ Ստալինն արագ ու վճռական կերպով վերականգնեց դրությունը Պերմի մոտ։ Հարավում Յարիցինի մոտ նրա հզոր կամքը թույլ չտվեց Դոնի հակահեղափոխությանն իր ուժերը միաձուլելու Ռեբալի և Պովոլժյեյի ուժերի հետ։ Հյուսիսում Ստալինը վիժեցրեց ինտերվենտների՝ չեխերի ու Կոլչակի հետ միանալու փորձը։ Կարմիր զորքերն սկսեցին հարվածել դաշնակիցներից կտրված Կոլչակին թե՛ հարավում և թե՛ հյուսիսում։

Արևելյան ճակատից վերադառնալուց հետո Ստալինը ձեռք ե դարկում պետական վերահսկողություն կազմակերպելու դորձին և լենինի առաջարկով 1919 թ. մարտին նշանակվում է Պետական Վերահսկողության, հետագայում վերակառուցված Բանվորա-Գյուղացիական Տեսչության ժողկոմատի ժողովրդական կոմիսար։ ԲԳՏ ժողկոմ և մուլտ Ստալինը մինչև 1922 թ. ապրիլը։ Այդ աշխատանքը հսկայական նշանակություն ունեցավ աշխատավորներին պետության կառավարման դործի մեջ ներդրավելու համար։

1919 թ. մայիսին, կարմիր զորքերին Կոլչակից հեռացնելու նպատակով, գեներալ Յուդենիչը սպիտակ-Քինդիական ու եստոնական զորքերի ողնությամբ նետվեց գետի Պետրոգրադ։ Յուդենիչի հարձակմանն ողնում եր անդիմական նախախումբը։ Կարմիր բանակի թիկունքում ապստամբություն կազմակերպեց «Կրասնայա դորկա» և «Սերայա լուշաղ» ամբություններում։ Կարմիր ճակատը յերերաց, և թշնամին ճեղքեց-մոտեցավ իրեն իսկ՝ Պետրոգրադին։

Սպիտակներին հակահարված տալու դորձը կազմակերպելու համար կենտրոնական կոմիտեն ուղարկեց Ստալինին ։ Դեպի ճակատ շարժվեցին կոմունիստները։ Ստալինն արա-

գորեն վերացրեց շվութվածությունը, անողոքաբար վուլն-չացրեց թշնամիներին ու գավաճաններին։ Յամաքից հետեւ վակի և ծովից նավերի համակցված հարվածով գրավվեցին խոսվարական ամբությունները, հետ շղթավեցին սպիտակ-գվարդիական կորքը։ Պետրոգրադին սպառնացող վտանգը վերացվեց։ Անտանտայի պլանները—Պետրոգրադի գրավումը ջախջախվեցին։ Յուդենիչի բանակը ջախջախվեց, նրա մնացորդները փախան ետոններ։

1919 թվի ամառը Ստալինն աշխատում է արևմտյան ճակատում, Սմոլենսկում, հակահարված կազմակերպելով լեհական հարձակման դեմ։

Անտանտան, վոր ջարդվել եր առաջին արշավանքի ժամանակ, ճնշելով Խորհուրդները Բավարիայում, Հունգարիայում, Եստոնիայում, Լատվիայում, 1919 թ. աշնան դեմ ձեռնարկեց յերկրորդ արշավանքին, մասնակից դարձնելով այդ արշավանքին, բացի սպիտակ զորքերից և իր ջոկատներից, Ռուսաստանին սահմանակից մանր պետությունների բանակները։ Այդ արշավանքն անգլիական զինվորական մինիստրը պարձենկուությամբ անվանեց «14 պետությունների արշավանք»։

Մինչդեռ Կարմիր բանակը ջարդուված եր անում Կոլչակին արևելքում, Դենիկինը դրավեց Դոնբասը և լայն ճակատով Ուկրաինա ներխուժեց։ Տրոցկին դավաճանորեն քայլքայից աշխատանքը հարավային ճակատում։ Կարմիր դորքերը պարտություն եյին կրում։ Դենիկինին ողնության հասան սպիտակ լեհերը՝ դրավելով Մինսկը։ Յուդենիչը Պետրոգրադի մոտ նորից հարձակման անցավ, իսկ Կոլչակը փորձեց կանգ առնել Տորոլում։ Դեռ յերեք թշնամին այլպես մոտիկ չեր յեղել խորհրդացին մայրաքաղաքին։ Դոնեցի կապիտալիստները նույնիսկ հայտարարեցին մեկ միլիոն պարզեց սպիտակներից նրան, ով առաջինը կմտնի Մոսկվա։

Ի պատասխան սպիտակների հարձակման՝ Լենինը կենտրոնական կոմիտեյի անունից դիմեց կուսակցական կազմակերպություններին մի բոցաշունչ կոչով—«Ամենքը դեպի կոմիտակ դնդերից Դենիկինի դեմ»։

Հարավային ճակատը ստացավ մասսայական համալրումներ մարդկանցով, մարտական միջոցներ, բայց հարկավոր եր մի ղեկավար, վոր կարողանար համախըմբել հարյուր-հազարավոր մարտիկներին, նրանց ցեմենտել միանական կամքով և նետել թշնամու վրա: Կուսակցության կենտրոնական կոմիտեն ուղարկում է Ստալինին՝ հարավային ճակատում հաղթությունը կազմակերպելու համար:

Հեղափոխության զորավարը ճակատում դտավ իրարանցում, չփոթվածություն, ստրատեգիական պլանի բացակայություն: Վոնդելով շտաբներից Տրոցկու սնանկացած դրածուներին (ставленников) և պահանջելով, վոր Տրոցկին բոլորովին չմիջամտի ճակատի դործերին, Ստալինը դեն չպրտեց գենիկինյան ճակատը վորդայից նովորոսիսկի ուղղությամբ ճեղքելու հին վորդագործ պլանը և կազմեց պայքարի իր՝ խնդիրը հանձարեղորեն լուծող պլանը: Ստալինն առաջարկեց գլխավոր հարվածը Դենիկինին ուղղել Խարկով-Դոնբաս-Ռոստովի վրայով՝ հակահեղափոխության բանակը յերկու մասի ճեղքելու համար: Այդ պլանն ապահովում եր Կարմիր բանակի արագ առաջինացումը պրոլետարական կենտրոններ ունեցող ուայնով, վորտեղ բնակչությունն ակնհայտ համակրանքով սպասում եր Կարմիր բանակին, վորտեղ յերկաթուղիների հարուստ ցանց կար, վոր զորքերին հնարավորություն եր տալիս մատակարարում ստանալ անհրաժեշտ ամեն բանով: Միաժամանակ պլանն ազատում եր Դոնբասը-հեղափոխական ուժերի այլ հոգոր աղբյուրը, —վոր յերկերն ապահովում եր վառելիքու:

Ստալինի պլանն ընդունվեց կենտրոմի կողմից:

Ստալինը հաղթությունը կազմակերպելու հսկայական աշխատանք ծավալեց: Նա հետեւմ եր ոպերացիաների ընթացքին, տեղնուտեղը շտկում եր սխալները, հրամանատարներ ու քաղաքանատողներ եր ընտրում, նրանց վորդերովի կուլելու: Ստալինի ղեկավարությամբ հարավային ճակա-

տում մշակվեց հրահանդ գնդի կոմիսարի համար, վորի մեջ կոմիսարի խնդիրը ձեռկերպվեց հետեւյալ ցայտուն բառերով:

«Գնդի կոմիսարն իր գնդի քաղաքական և բարոյական գեկավարն և, նրա նյութական ու հոգեոր շահերի առաջին պաշտպանը: Յեթե գնդի հրամանատարը գնդի գլուխն և, ապա կոմիսարը պետք ե իր գնդի հայրն ու հոգին լինի»:

Ստալինի պլանի իրացումը կատարյալ ջախջախման յինթարկեց Դենիկինին: Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ստեղծվեց I Հեծյալ Բանակը Բուղյուննու, Վորոշիլովի, Շաղենիկոյի գլխավորությամբ: Լեգենդային Հեծյալ Բանակը, հարավային ճակատի բանակների ոժանդակությամբ, վերջ Դենիկինի գորքերին:

1920 թվին Ստալինը կենտրոմի կողմից ուղարկվում ե հարավ-արևմտյան ճակատը լեհական պաների գեմ, վորոնք Անտանտայի յերրորդ արշավանքն ելին սկսել Խորհրդային հանրապետության դեմ: Այստեղ Ստալինն անմիջական զեկավար մասնակցություն ե ունենում լեհական ճակատը ճեղքելու դործում, Կիևն ազատելու և մեր զորքերը գեպի Լվովի մասույցներն առաջ շարժելու դործում: Նույն 1920 թվականին Ստալինն աշխատում ե Ռվաբախնի հարավ-վրանդելի հարձակումից պաշտպանելու համար, նշագրանդելի վրանդելին վոչնչայնելու պլանը: Ստալինի ցուցնում ե Վրանդելին վոչնչայնելու պլանը: Ստալինի ցուցնում կազմում ելին Ֆրունզեյի այն ոպերատիվ պլանի հիմքը, վորի համաձայն ջախջախման վրանդելը:

Քաղաքացիական պատերազմի տարիներին կուսակցության կենտրոմը և Լենինն անձամբ Ստալինին ուղարկում էլին հեղափոխության համար ամենավճռական ու վատանդակուրը: Ընկեր Ստալինը Հանրապետության դակատները: Ընկեր Ստալինը Հանրապետության նորհրդի անդամ և արևմտյան, հարավահեղափոխական նորհրդի անդամ և արևմտյան, հարավահեղափոխային, հարավ-արևմտյան ճակատների նորհրդամանեղափոխական խորհուրդների անդամ եր: Այստեղ, վորտեղ միշտակում պատճառների չնորհիվ մահացու վտանդ եր ստեղծվում կարմիր բանակի համար, վորտեղ հակահեղափոխությունը մշակված էր առաջարկությունում:

թյան և ինտերվենցիայի բանակների առաջիկացումն սպառնում եր Խորհրդային իշխանության բուն խկ գոյությանը, այնտեղ ուղարկում ելին Ստալինին : Այնտեղ, «Որտեղ իրարանցումն ու խուճապը կարող ելին ամեն ըստե անձարության ու կատաստրօֆայի փոխվել, — այնտեղ հանդես եր գալիս ընկեր Ստալինը»¹:

Ստալինը կազմակերպում եր կուսակցական ու բանվորական մասսաներին, իր ամուր ձեռքն եր վերցնում զեկավարությունը . մասսաների վրա հենվելով՝ նա անողոք կերպով ընկերում եր սարուտաժը, յերկաթե ձեռքով ձնչում եր դավաճանների, մատնիչների, լրտեսների դավադրությունները թիկունքում ու ճակատում . ինքնազոհ աշխատանքի անձնական որինակով և հեղափոխական պարզ հեռանկարով նա բարձրացնում եր բանվորների ու գյուղացիների, կարմիր-բանակայինների մարտական վողին և հեղափոխական խանդակառությունը . ամենակարծ ժամկետներում նա արմատական բեկում և կարմիր բանակի հաղթություն եր ձեռք բերում :

Նա համեմում և ջարդութչուր եր անում թշնամիների ամենավարպետ ու ամենանենդ ստրատեգիական պլանները, տարալում եր նրանց ամբողջ ուղղմական դիտությունը, ուղղմական արվեստն ու փորձը :

Ստալինի ծառայությունները քաղաքացիական պատերազմի ճակատներում Լենինի նախաձեռնությամբ նշվեցին Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 1919 թվի նոյեմբերի 27-ի վորոշումով, վորի մեջ ասված և .

«Մահացու վտանգի բոպեյին, յերբ ամեն կողմից թշնամիների սեղմ ողակով չըշապատված, Խորհրդային իշխանությունը հետ եր մղում թշնամու հարվածները, այն բոպեյին, յերբ Բանվորա-Գյուղացիական Հեղափոխության թշնամիները 1919 թվականի հուլիսին մոտենում ելին կարմիր Պիտերին և արգեն տիրել ելին Կրասնայա Գորկային, Խորհրդային Ռուսաստանի համար այդ ծանր ժամին, Հա-

մառուսական կենտրոնակոմի նախադահության կողմից մարտական պոստում նշանակված իսոսիֆ Վիսարիոնովիչ Զուզաշիլին (Ստալինը) իր յեռանդով ու անխոնչ աշխատանքով կարողացավ համախմբել Կարմիր բանակի յերերած շարքերը :

Անձամբ մարտական գծի ուայոնում լինելով, նա մարտական կրակի տակ, անձնական որինակով վողերում եր Խորհրդային Հանրապետության համար կովող շարքերին :

Ի հայերժացումն Փետրոպաղի պաշտպանության գծով նրա բոլոր ծառայությունների, ինչպես նաև հարավային ճակատում կատարած նրա հետագա անձնազոհ աշխատանքի, Համառուսական կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշեց պարզեատրել ի. վ. Զուզաշիլուն (Ստալինին) «Կարմիր Դրոշի» շքանշանով» :

Կարմիր բանակը—աշխարհում առաջին Կարմիր բանակը, աղաստադրված բանվորների ու գյուղացիների բանակը, մեր յերկրի ժողովուրդների փոխադրձ յեղբայրության բանակը, ինտերնացիոնալիզմի վողով դաստիարակված բանակն ստեղծողը յեղավ բոլչեմիների կուսակցությունը լենինի և Ստալինի զինավորությամբ : Լենինն ու Ստալինն անմիջաբար զեկավարում ելին յերկրի պաշտպանության գործը բոլչեմիկյան կուսակցության լավագույն գործիչների հետ միասին :

Կարմիր բանակի կարևորագույն հաղթությունների անմիջական վոգեշնչողն ու կազմակերպող Ստալինն եր : Ամենուրեք, վորտեղ ճակատներում հեղափոխության բախտն եր վճռվում, կուսակցությունն ուղարկում եր Ստալինին : Նա ստրատեգիական կարևորագույն պլանների կերտողն եր : Ստալինն անմիջականորեն զեկավարում եր վճռական մարտական ուղերացիաները : Յարիցինի մոտ և Պերմի մոտ, Փետրոպաղի մոտ և Դենիկինի դեմ, արևմուտքում պանական Լեհաստանի դեմ և հարավում վրանդելի դեմ—ամեն տեղ Ստալինի յերկաթե կամքը և ստրատեգիական հանձարն ապահովում ելին հեղափոխության հաղթությունը : Ստա-

¹ Կ. Ֆե. Վորոշիլով, «Ստալինը և Կարմիր բանակը», էջ 6:

լինը ուաղմական կոմիսարների դաստիարակիչն ու զեկալարըն եր, առանց վորոնց, ըստ Լենինի բնորոշման, Կարմիր բանակ չեր լինի: Ստալինի անունը կապված է մեր կարմիր բանակի ամենափառավոր հաղթությունների հետ:

VII

Հաղթականորեն վերջացնելով ինտերվենտների դեմ մղվող պատերազմը՝ Խորհրդային իշխանությունն սկսեց անցնել խաղաղ տնտեսական շինարարության: Յերկիրն ավերված եր քառամյա իմպերիալիստական պատերազմից և յեռամյա քաղաքացիական պատերազմից: Դյուլացիությունը քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո դժունություն եր արտահայտում բոլոր ավելցուկները վերցնելու, պարենմասնատրման սիստեմի դեմ և պահանջում եր իրեն բավարար քանակությամբ ապրանքներ մատակարարել: Սովոր ու հոգնածության հողի վրա դժունություն եր արտահայտվում նաև բանվորների մի մասի մեջ: Դասակարգային թշնամին փորձում եր ողտագործել յերկրի տնտեսական ծանր դրությունը:

Կուսակցության առաջ ծառացավ յերկրի տնտեսական կյանքի բոլոր խնդիրների նկատմամբ նոր դիրքորոշում մշակելու հարցը: Կենտրոնական կոմիտեյի համար պարզ եր, վոր ուղմական կոմունիզմի սիստեմը, պատերազմը վերջանալուց և խաղաղ շինարարության անցնելուց հետո, արդեն սպառել ե իրեն: Վերանում եր պարենմասնատրման անհրաժեշտությունը, պետք եր դյուլացիներին հնարավորություն տալ իրենց արտադրության ավելցուկների մեծ մասն ոգտագործելու: Այդ թույլ կտար աշխուժացնել դյուղատնտեսությունը, ապրանաքաշը անառությունը, բարձրացնել արդյունաբերությունը, բարելավել քաղաքների մատակարարումը, ստեղծել բանվորների ու դյուլացիների դաշնքի տնտեսական նոր հիմք:

Բայց հակակուսակցական խմբավորումները փորձում եյին խանգարել կուսակցությանը նոր դիրքավորումներ

մշակելու գործում: 1920 թ. վերջերին նրանք կուսակցության վզին վաթաթեցին այսպես կոչված պրոֆմիությունների վերաբերյալ դիմուսական անհամեմատ ավելի լայն նշանակություն ուներ, քան պրոֆմիությունների հարցը: Բայց եյության պայքարը մղվում եր այն ուղղությամբ, թե կուսակցությունն ի՞նչ վերաբերմունք պետք ե ունենա դեպի գյուղացիությունը, ինչպես պետք է վերաբերվի կուսակցությունը դեպի բանվորների անկուսակցական մասսան, առաւսարակ կուսակցությունն ինչ վերաբերմունք պետք ե ունենա դեպի մասսաները նոր ինչ վերաբերմունք պետք է ունենա դեպի մասսաները նոր իրազըռության մեջ: Տրոցկիստներն առաջարկում եյին ուղական կոմունիզմի «գայկաներն ել ավելի պնդացնել»: Մասսաների նկատմամբ սոսի հարկադրանքի ու հրամայելու իրենց դավանական քաղաքականությամբ նրանք ձգտում եյին բանվորների անկուսակցական մասսային վոտքի հանել կուսակցության դեմ, ձգտում եյին սպառնալիք ստեղծել Խորհրդային իշխանության գոյության դեմ: Տրոցկիստների հետեւ հանդես յեկան նաև մյուս հակակուսակցական խըմբակները. «բանվորական ոպողիցիա», «գենուրատական ցենտրալիստները», «ձախ կոմունիստները»:

Ենինի հետ միասին Ստալինը հետեղովականորեն կիրառում ու պաշտպանում եր կուսակցական վիճը և չախչախում եր կուսակցության այլ բոլոր թշնամիներին: Ստալինը կազմակերպություն եր հակալենինյան խմբավորումների զեկավարում եր հակալենինյան դիմությունների գիմ մղվող պայքարը պրոֆմիութենական դիմուսակայի շրջանում, կուսակցությունը համախմբելով լենինյան պլատֆորմի շուրջը: Ստալինի մոտ եյին հավաքվում կուսակցության զծի համար մղվող պայքարի ընթացքի վերաբերյալ բոլոր ավելացները տեղյալից: Ստալինն այդ որերը «Правда»-ին եր ուղարկում տեղական կազմակերպություններում մղվող դիմուսակայի արդյունքների վերաբերյալ տվյալները, վորոնք ցույց եյին տալիս կուսակցության հաղթությունը և հակալենինյան խմբավորումների պարտությունը:

Կուսակցական դժի հաղթության և կուսակցությունը

Լենինի շուրջը, կենտկոմի լենինյան մեծամասնության շուրջը համախմբելու գործում խոշոր նշանակություն ունեցավ 1921 թ. հունվարի 19-ին «Պրավդա»-յում հրապարակված Ստալինի հոգվածը—«Մեր տարածայնությունները»։ Լենինի հետ միասին Ստալինը պաշտպանեց կուսակցության միասնությունը հակակուսակցական ֆրակցիաների ու խմբավորումների բոլոր գրոհների գեմ։

Լենինյան դիրքերում համախմբված յեկավ կուսակցությունն իր X համադումարը, վորը պետք ե վճռեր հեղափոխության հետագա հաղթական շարժման հիմնական հարցերը։ X համագումարը (1921 թ. մարտ) ամփոփեց պրոֆմիությունների վերաբերյալ զիսկուսիայի արդյունքները և ձայների ձնչող մեծամասնությամբ հավանություն տվեց լենինյան պլատֆորմին։ Համագումարը բացառիկ կարեռությունն ունեցող վորոշում ընդունեց պարենմանամասնարումից պարենահարկին անցնելու մասին, նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու մասին, վորի ստեղծողն ու վորեշնչողը լենինին եր։ X համագումարի՝ նոր անտեսական քաղաքականության անցնելու վերաբերյալ վորոշումն ազահովում եր բանվոր դասակարգի ու դյուզացիության ամուր դաշինքը սոցիալիզմի կառուցման համար։

Այդ նույն հիմնական խնդրին եր ծառայում նաև համագումարի վորոշումն ազգային հարցի մասին։ «Կուսակցության հերթական խնդրներն ազգային հարցում» դեկուցումը համագումարում արեց Ստալինը։

Ստալինի գեկուցման և համագումարի բանաձեռի մեջ ճշգրիտ ու պարզորոշ կերպով ձևակերպվեց հիմնական պրակտիկ խնդրն ազգային հարցում։ Մենք վերացրինք ազգային ձնչումը, ասում եր Ստալինը, բայց այդ բավական չեւ։ Պետք ե վերացնել անցյալի ծանր ժառանգությունը—առաջարկությունը առաջարկություններում ձնչած ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական հետամնացությունների առաջարկությունների մեջ առաջարկություններին։ Ստալինը կուսակցությանը կոչ

արեց պայքարելու մեծապետական, վելիկոպուսական չուլինիկմի՝ վորպես գլխավոր վտանգի դեմ, և պայքարելու անդական նացիոնալիզմի դեմ։

Անցալ ների առաջին տարին։ XI համագումարում (1922 թ. մարտ) կուսակցությունն ամփոփեց նոր տնտեսական քաղաքականության առաջին տարվա արդյունքները։ Այդ արդյունքները թույլ տվին լենինին հայտարարել։

«Մենք մեկ տարի նահանջում ենինք։ Մենք պետք ե այժմ առենք կուսակցության անունից բավական ե։ Այն նպատակը, վոր հետապնդում եր նահանջը, իրադուրծված ե։ Այդ շրջանը վերջանում ե, կամ վերջացավ։ Այժմ վորոշումը նպատակ ե առաջադրվում—ուժերի վերախմբավորում»¹։

Պետք եր կյանքում կիրառել լենինի համագումարում գրած պատմական խնդրները։ Կուսակցության կենտրոնագրած պատմական խնդրների պլենումը համագումարից հետո լենինի կոմիտեի պլենումը գլխավոր քարտուղար և ընտրում կենինի ամենալավագույն և ամենահայտարիմ աշակերտին ու գլուխին—Ստալինին։ Այդ ժամանակից սկսած Ստալինն անփոփոխ աշխատում ե այդ պոստում։

Լենինի վիրավորումը 1918 թ. նրա դեմ կատարված մահավորձի ժամանակ և անընդհատ լարված աշխատանքը խսիրեցին նրա առողջությունը։ 1921 թվի վերջերից սկսած լենինն ստիպված եր ավելի ու ավելի հաճախ ընդհատելու իր աշխատանքը։ Կուսակցությունը ղեկավարելու ամրոջ աշխատանքը Ստալինն եր կատարում։

Այդ տարիներում Ստալինը հսկայական աշխատանք կատարեց ազգային Խորհրդային հանրապետություններ ստեղծելու, իսկ հետո բոլոր Խորհրդային հանրապետությունները մեկ միութենական պետության—ԽՍՀՄ մեջ միացնելու ուղղությամբ։ 1922 թ. գեկտեմբերի 30-ին Խորհրդաների 1 Համառուսական համագումարում լենինի և Ստալինի առաջարկով պատմական վորոշում ընդունվեց խորհրդային

¹ Լենին, հ. XXVII, էջ 314։

ժողովուրդների հոժարակամ պետական միավորման մասին՝ վորակս Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն—ԽՍՀՄ : Համագումարում հանդես դաշտով, Ստալինն ասում էր .

«Բնելերներ : Խորհրդային իշխանության պատմության մեջ այսորվա որը բեկման որ ե : Նա նշանաձողեր ե դնում էին, արդեն անցած այն ըրջանի միջև, յերբ խորհրդային հանրապետությունները թեև միասին ելին դորժում, բայց անջատ-անջատ եյին ընթանում, զբաղված ամենից առաջ իրենց գոյության հարցով, և նոր, արդեն սկսված ըրջանի միջև, յերբ խորհրդային հանրապետությունների առանձին գոյությանը վերջ ե գրվում, յերբ հանրապետությունները միանում են վորպես միասնական միութենական պետություն՝ տնտեսական փոլուման գեմ հաջող պայքարելու համար, յերբ խորհրդային իշխանությունը մտածում ե արդեն վո՛չ միայն գոյության մասին, այլև այն մասին, վորպեսզի զարդանալով դառնա միջազգային իրադրության վրա ազդելու ընդունակ, այդ իրադրությունը աշխատավորների շահերի համեմատ փոփոխելու ընդունակ մի լուրջ միջազգային ուժ »¹ :

ԽՍՀՄ ստեղծումը լենինյան-ստալինյան ազդային քաղաքականության խոչոր հաղթանակն եր նշանակում : Խորհրդային Միությունն ստեղծվեց առաջներում ցարիզմի ճնշած ժողովների կողմից գետի ոռւս մեծ ժողովուրդը տածվող վրահանության անխախտ պատվանդանի վրա, Խորհրդային յերկրի ժողովուրդների բարեկամության հաստատում հիմքի վրա :

1923թ. ապրիլին կայացավ կուսակցության XII համագումարը : Այդ առաջին համագումարն եր Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթությունից հետո, վորին լենինը հիվանդության պատճառով չկարողացավ ներկա լինել : Համագումարի աշխատանքը զեկավարում եր Ստալինը : Համագումարը հաշվի առաջ իր վորոշումների

մեջ լենինի այն բոլոր ցուցումները, վոր նա տվել եր իր վեսչին հողմաներում ու նամակներում : Համագումարը վճռական հակառակված տվեց նրանց, ովքեր փորձում եյին նեպը պատկերացնել վորպես նահանջ սոցիալիստական դիրքերից, ովքեր առաջարկում եյին ստրկանալ կապիտալիզմին : Համագումարը նշավակեց տրոցկիստների և բուխարինական-ների դավաճանական, կապիտուլանտական առաջարկիները :

Համագումարում Ստալինը հանդես յեկավ կենտկոմի գործունեյության վերաբերյալ հաշվետվությամբ և «Ազգագործունեյության վերաբերյալ հաշվետվության յին մոմենտները կուսակցական ու պետական շինարարության մեջ» գեկուցումով : Հաշվետու զեկուցման մեջ Ստալինը այլուց կուսակցության գործունեյության, նոր աճման, կուսակցությունից դեպի մասսաները ձգվող շարժափոկերի ավրոֆմիություններ, կոմյերիտմիություն, Խորհուրդներ և (ավրոֆմիություններ, կոմյերիտմիություն, Ստալինը) ամրացման բայն պատկերը, ամփոփեց նեպի յերկու այլն) ամրացման բայն պատկերը, ամփոփեց նեպի յերկու տարիվա արդյունքները, նշեց հետագա առաջննախաց շարժման խնդիրները : «Մեր կուսակցությունը մնաց վորպես զոդ-ված, համախմբված, մեծագույն ըրջադարձին դիմացած, զայն պարզած գրոշով առաջ գնացող կուսակցություն», — ավարտեց իր հաշվետվությունն Ստալինը :

Համագումարը լուրջ ուշադրություն նվիրեց ազգային հարցին : Ազգային հարցի վերաբերյալ գեկուցման մեջ Ստալինն ընդդժեց մեր ազգային քաղաքականության հաս- կայական միջազգային նշանակությունը, մատնանշեց, վոր Արևելքի և Արևմուտքի ճնշված ժողովուրդները Խորհրդա- յին Միության մեջ տեսնում են ազգային հարցի լուծման արինակը : Ստալինը մատնանշեց, վոր անհրաժեշտ ե յե- ռունդուն աշխատանք կատարել՝ Խորհրդային Միության ան- ժողովուրդների միջև տնտեսական ու կուլտուրական ան- հավասարությունը վերացնելու համար : Ստալինն ամրոջ կուսակցությանը կոչ արեց վճռական պայքար մղելու վե- հեկուսական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ, ինկոռուսական կապիտալիզմին կապիտալիզմի մասնակի աշխու- ժացման կապակցությամբ : Ստալինը մերկացրեց վրացա-

1 ի. Ստալին, Մարքսիզմը և ազգային-զաղության հարցը, էջ 153:

կան նացիոնալ-իռակլոնիստներին, վորոնց պաշտպանում էին տրոցկիստները:

Դեռ նոր եր վերջացել XII համագումարը, յերբ Հորիզոնի վրա մի լուրջ վտանգ յերևաց Խորհրդային հանրապետության համար: Անգլիայում և Ֆրանսիայում իշխանության գուրս անցած՝ բուրժուազիայի ամենառեալիցիոն և ինտերվենցիոնիստական տարրերը փորձում ենին նոր արշավանք կազմակերպել Խորհրդային Միության դեմ: Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունը պատվով դուրս յեկալ սուր դրությունից, խոչոր հաղթություն տարավ դիվանագիտական ճակատում: Սպառնալիքներին և ուլտրաստումներին 1924 թվին փոխարինեցին ԽՍՀՄ-ի մի շարք ճանաչումներ Յեղոստայի բոլոր խոչոր կապիտալիստական պետությունների կողմից: «Այն փաստը, վոր մենք այն ժամանակ դժվարություններից դուրս յեկանք առանց դործին վնասելու, —մատնանշում եր հետագայում Ստալինը, —անկասկածելիորեն այն մասին ե վկայում, վոր ընկեր Լենինի աշակերտներն արդեն մի վորոշ բան սովորել են իրենց ուսուցից»¹:

1924 թ. հունվարի 21-ին Մոսկվայի մոտ Գորկիում վախճանվեց Լենինը, բոլշևիկների կուսակցության առաջնորդն ու հիմնադիրը, ամբողջ աշխարհի աշխատավորության առաջնորդը: Լենինի դրոշը, կուսակցության ու կոմիտենի դրոշը բարձր վերհանեց և առաջ տարավ Ստալինը—բոլշևիկյան կուսակցության լավագույն դավակը, Լենինի արժանավոր հաջորդը և նրա դործի մեծ շարունակողը:

Հունվարի 26-ին բացվեց Խորհուրդների II Համառուսական համագումարի սգո նիստը: Այդ նիստում ճառով հանդես յեկալ Ստալինը: Նա կուսակցության անունից մեծ յերդում տվեց.

«Մենք, կոմունիստներս, առանձին խառնվածքի տեր մարդիկ ենք: Մենք ձեւված ենք առանձին նյութից: Մենք

նրանք ենք, վոր կազմում ենք պրոլետարական մեծ ստրատեգիակը, ընկեր լենինի բանակը: Զկա վոչինչ ալելի բարձր, քան այդ բանակին պատկանելու պատիվը: Զկա վոչինչ ալելի բարձր, քան այն կուսակցության անդամները կոչումը, վորի հիմնադիրն ու ղեկավարն ընկեր լենինն է...»

Հեռանալով մեզնից՝ ընկեր լենինը մեզ կտակեց բարձր պահել ու մաքուր պահպանել կուսակցության անդամները: Յերդվում ենք ֆեզ, ընկեր լենին, վոր մենք պատվով կատարենք քո այդ պատվիրանը...

Հեռանալով մեզնից՝ ընկեր լենինը մեզ կտակեց աչքի լույսի պես պահպանել մեր կուսակցության միասնությունը: Յերդվում ենք ֆեզ, ընկեր լենին, վոր մենք պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս...

Հեռանալով մեզնից՝ ընկեր լենինը մեզ կտակեց պահպանել ու ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան: Յերդվում ենք ֆեզ, ընկեր լենին, վոր մենք չենք խնայի մեր ուժերը, չորպեսզի պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս...

Հեռանալով մեզնից՝ ընկեր լենինը մեզ կտակեց բոլոր ուժերով ամրապնդել բանվորների ու գյուղացիների դաշինքը: Յերդվում ենք ֆեզ, ընկեր լենին, վոր մենք պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս...

Ընկեր լենինը մեզ անդադար ասում եր, վոր անհրաժեշտ և մեր յերկրի ժողովուրդների կամավոր դաշինքը, անհրաժեշտ և նրանց յեղբայրական համագործակցությունը Հանրապետությունների Միության ըրջանակներում:

Հեռանալով մեզնից՝ ընկեր լենինը մեզ կտակեց ամրացնել ու ընդլայնել Հանրապետությունների Միությունը: Յերդվում ենք ֆեզ, ընկեր լենին, վոր մենք պատվով կատարենք քո այդ պատվիրանը ևս...

Լենինը մեզ շատ անդամ և մատնանշել, վոր Կարմիր բանակի ամրացումը և նրա դրության բարելավումը մեր կուսակցության կարեռագույն խնդիրներից մեկն ե...

¹ Ի. Ստալին. Օբ օպոզիցիա, 49 74:

Յերդվենք, ուրեմն, ընկերներ, վոր մենք ուժներս չենք խնայի մեր կարմիր բանակը, մեր կարմիր նախատորմն ամբացնելու համար...

Հեռանալով մեզնից, ընկեր Լենինը մեզ կտակեց հայատարիմ մեալ Կոմունիստական Խնտերնացիոնալի սկզբունքներին: Յերդվում ենք քեզ, ընկեր Լենին, վոր մենք մեր կյանքը չենք խնայի, վորպեսզի ամրապնդենք ու ընդլայնենք ամբողջ աշխարհի աշխատավորների միությունը—կոմունիստական Խնտերնացիոնալը»¹:

Այդ բոլցեիկյան կուսակցության յերդումն եր իր առաջնորդին, Լենինին, վորը ապրելու յե դարերով: Այդ յերդումը կուսակցությունը Ստալինի ղեկավարությամբ կատարեց և կատարում ե պատվով:

Ոգութելով սկզբում լենինի հիմանդրությունից, իսկ հետո, նրա մահից, սոցիալիզմի թշնամիները փորձում ելին կուսակցությունը չեղել լենինյան ուղղուց, վորպեսզի հենց դրանով ել պայմաններ նախապատրաստեն կապիտալիզմը մեր յերկրում վերականգնելու համար: Առանձնապես կատարությամբ հարձակվում ելին կուսակցության վրա լենինիզմի վոխերիմ թշնամի Տրոցկին և նրա գործակիցները: Տրոցկիստները կուսակցության վզին նոր դիսկուսիա փաթաթեցին: Պայքարը կատաղի բնույթ եր կրում: Ստալինը մերկացրեց տրոցկիստների յելույթների քաղաքական եյությունը, ցույց տվեց, վոր հարցը վերաբերում ե կուսակցության կյանքին ու մաշվան, համախմբեց կուսակցական կադրերին և կազմակերպեց տրոցկիզմի ջախջախումը:

1924 թ. հունվարին գումարվեց XIII կուսակցական կոնֆերենցիան: Նա լսեց Ստալինի ղեկուցումը, վորն ամփոփեց դիսկուսիայի արդյունքները: Կոնֆերենցիան վճռականական դատապարտեց տրոցկիստներին: Կոնֆերենցիայի վորոշումներին հավանություն տվին XIII կուսակցական համագումարը (1924 թ. մայիս) և կոմիստներնի Վ կոնդրեսը (1924 թ. ամառը):

¹ Ի. Ստալին, Լենինի մասին, Էջեր 15, 16, 17, 18, 20:

Տրոցկու դեմ այդ շրջանում մզկող պայքարում Ստալինը մատնանշում եր, վոր «կուսակցության խնդիրն է քաղել արոցկիզմը, վորպես իդեալան հոսանք»: Նա մատնանշեց կուսակցությանը, վոր այն ժամանակվա պայմաններում տրոցկիզմը գլխավոր վտանգն եր:

«Տվյալ մոմենտում,—առում եր Ստալինը,—Հոկտեմբերի հաղթությունից հետո, նեպի այժմյան պայմաններում, ամենից ավելի վտանգավոր պետք ե համարել տրոցկիզմը, վորովհետև նա աշխատում ե անվատահություն սրատվասել գեպի մեր հեղափոխության ուժերը, անվատահություն գեպի բանվորների ու գյուղացիների դաշնաբի գործը, անվատահություն գեպի նեպական Ռուսաստանը սոցիալիստական Ռուսաստանի փոխարկելու գործը»²:

Ստալինն ապացուցեց, վոր տրոցկիզմի իդեալական ջախջախումն այն պայմանն ե, վորն անհրաժեշտ ե՝ ապահովելու համար հետագա հաղթական սուածընթաց շարժումը գեպի սոցիալիզմը: Ստալինն ասում եր,

«Առանց տրոցկիզմը ջախջախելու՝ չի կարելի հաղթություն ձեռք նեպի պայմաններում, չի կարելի այժմյան Ռուսաստանը փոխարկել սոցիալիստական Ռուսաստանի»²:

Տրոցկիզմի դեմ մզած մարտերում Ստալինը համախմբեց կուսակցությունը նրա կենտկոմի շուրջը և նրան մորկիզմայի յենթարկեց հետագա պայքարի համար հանուն մեր յերկրում սոցիալիզմի հաղթության:

Բացառիկ մեծ նշանակություն ունի տրոցկիզմի իդեալական ջախջախաման, լենինիզմի պաշտպանության, հիմնավորման ու զարգացման գործում Ստալինի «լենինիզմի հետունքների մասին» թեորիական աշխատությունը, վոր մունքների մասին»: Մեռիտական աշխատությունը լենինույս տեսակ:

¹ Ի. Ստալին. Крестьянский вопрос. Հոդվածների ժողովածու. 1926 թ., եջ 55:

² Կույն տեղում:

նիզմի վարպետ շարադրանքը և թեորիական խորը հիմնա-
փորումն է : Նա այն ժամանակ զինեց և այժմ զինում է ամ-
բողջ աշխարհի բոլշևիկներին մարքսիստական-լենինյան
թեորիայի հատու զենքով :

Այդ հանճարեղ աշխատության մեջ տրված է լենինիզմի,
այսինքն՝ նոր և առանձնահատուկ այն բանի հիմունք-
ների շարադրանքը, վորը կապված է լենինի անվան հետ,
վորը լենինը մտցրել է մարքսիստական թեորիայի զարգաց-
ման մեջ : Հենց միայն այն հանդամանքը, վոր տրվեց լե-
նինիզմի հարցերի այլպիսի ընդհանրացում, վոր լենինյան
ժառանգության ամբողջ իդեալական բովանդակությունը հա-
վաքվեց և քննության առնվեց նոր պատմական եպօխայի
տեսանկյունով, մի հսկայական առաջընթաց քայլեր մարք-
սիզմ-լենինիզմի դիսության զարգացման մեջ : Լենինյան
ուսմունքի բոլոր հարցերն այդ աշխատության մեջ հասց-
ված են սկզբունքային հսկայական բարձրության : Իր աշ-
խատության մեջ Ստալինը տալիս է լենինիզմի կլասիկ վո-
րոշումը : Ստալինը ցույց է տալիս, թե ինչպես լենինն ե՞լ
ավելի զարգացրեց մարքսիզմը նոր եպօխայի, իմպերիա-
լիզմի և պրոլետարական հեղափոխությունների եպօխայի
պայմաններում :

Փողովրդական տնտեսության վերականգնման աշխա-
տանքը մոտենում էր իր վախճանին : Փոխվել էր Խորհրդա-
յին Միության միջազգային և ներքին իրադրությունը : Կա-
պիտական իրկրներում սկսվեց հեղափոխություն, հաստատվեց կապիտա-
լիզմի ժամանակավոր մասնակի ստարիլիզացիա : ԽՍՀՄ-ում
ձեռք բերվեց տնտեսության մինչպատերազմյան մակար-
դակը : Պետք էր ավելի առաջ շարժվել : Ամբողջ սրությամբ
ծառացավ մեր շինարարության հեռանկարների, Խորհրդա-
յին Միության մեջ սոցիալիզմի ճակատադրի հարցը :

Հանճարեղ կանխատեսությամբ Ստալինը վորոշում է
հեղափոխության հետագա զարգացման հեռանկարն ու կոն-
կրետ:

«Դինամո» դործարանի բանվորներին ցանկանում եմ, —
գրում եր նա, — ինչպես և ամբողջ Ռուսաստանի բանվոր-
ներին, վորպեսզի արդյունաբերությունը բարձրանա սարն
իվեր, վորպեսզի պրոլետարների թիվը Ռուսաստանում
բարձրանա մինչև 20—30 միլ. մերձավորագույն շրջանում .
վորպեսզի կոլեկտիվ տնտեսությունը դյուղում ծաղկի և
իր աղղեցությանը յենթարկի մասնավոր տնտեսությունը .
վորպեսզի բարձր լինությունը վերջնականապես գործարանների
պրոլետարներին և հողի աշխատավորներին, վորպես մեկ
սոցիալիստական բանակ, վորպեսզի հաղթությունը Ռու-
սաստանում պատկի հաղթությամբ ամբողջ աշխարհում¹ :

Թեորիապես ընդհանրացնելով Հոկտեմբերյան Սոցիա-
լիստական Մեծ հեղափոխության փորձը, կապիտալիստա-
կան շրջապատման մեջ սոցիալիստական շինարարության
առաջին տարիների փորձը, Ստալինը պաշտպանեց ու ե'լ
ավելի զարգացրեց լենինյան ուսմունքը սոցիալիզմի հաղ-
թության մասին մեկ յերկրում :

1924 թ., դեկտեմբերին լույս տեսակ Ստալինի «Հոկ-
տեմբերյան հեղափոխությունը և ուսմական կոմունիստնե-
րի տակտիկան» հայտնի աշխատությունը : Հիմնալորելով
այդ աշխատության մեջ լենինյան դրույթը սոցիալիզմի
հաղթության մասին մեկ յերկրում, Ստալինը ցույց տվեց,
վոր պետք է տարբերել այդ հարցի յերկու կողմը — ներքին
և միջազգային կողմը : Ներքին կողմը — այդ՝ սոցիալիզմի
կառուցող յերկրի ներսում գանձկարգերի փոխհարաբե-
կառուցող յերկրի ներսում գանձկարգերի փոխհարաբե-
կառուցող յերկրի հարցն ե . միջազգային կողմը — այդ՝ ԽՍՀՄ,
առայժմ սոցիալիզմի դեռ միակ յերկրի և կապիտալիստա-
կան շրջապատման փոխհարաբերությունների հարցն է : Ներք-
ին դժվարությունները ԽՍՀՄ-ի բանվորներն ու դյուղա-
ցիները լիովին կարող են հաղթահարել սեփական ուժերով,
նրանք լիովին կարող են բնտեսապես հաղթահարել իրենց
սեփական բուրժուազիային և լիակատար սոցիալիստական

1 Г. К. Орджоникидзе. Избранные статьи и речи. 1939 թ., հ 450:

Հասարակություն կառուցել: Բայց այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական շրջապատռմը, գոյություն ունի նաև ԽՍՀՄ դեմ կապիտալիստական ինտերվենցիայի և կապիտալիզմի ռեստավրացիայի վտանգը: Այդ վտանգը վերացնելու համար անհրաժեշտ է վոչնչացնել հենց ինքը՝ կապիտալիստական շրջապատռմը, իսկ կապիտալիստական շրջապատռմը վոչնչացնել հնարավոր և միայն պրոլետարական հեղափոխության հաղթության միջոցով գոնե միքանի յերկրներում: Միայն այդ ժամանակ սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ-ում կարող է լինակտար, վերջնական հաղթություն համարվել:

Ստալինի այդ գոյությները կազմեցին կուսակցության XIV կոնֆերենցիաի (1925 թ. ապրիլ) պատմական բանաձեռ հիմքը: Կոնֆերենցիան հաստատեց ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթության լենինյան-ստալինյան դիրքավորումը, վորպես կուսակցության որենք, վոր պարտադիր և կուսակցության բոլոր անդամների համար:

1925 թ. դեկտեմբերին բացվեց կուսակցության XIV համագումարը: Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ Ստալինը նկարագրեց Խորհրդային Միության քաղաքական ու տնտեսական հզորության աճման վառ պատկերը: Սակայն, ասում եր Ստալինը, մենք չենք կարող բարարարվել այդ հաջողություններով, վորովհետեւ մեր յերկիրը շարունակում է հետամնաց, ազրաբային յերկիր մասը: Մեր յերկրի տնտեսական ինքնուրույնությունն ապահովելու և նրա պաշտպանունակությունն ամրապնդելու համար, սոցիալիզմի հաղթության համար անհրաժեշտ տնտեսական բազա ստեղծելու նպատակով, —պետք է մեր յերկրն ազրարային յերկրից դարձնել ինդուստրիալ յերկիր:

XIV համագումարի ամբիոնից կուսակցության առաջնորդն ասում եր.

«Մեր յերկիրը ազրարային յերկրից դարձնել ինդուստրիալ, անհրաժեշտ սարքավորումն իր սեփական ուժերով

արտադրելու ընդունակ յերկիր, —ահա վորն է մեր գլխավոր գծի եյությունը, հիմքը»¹:

Սոցիալիստական ինդուստրացման ստալինյան պլանին կապիտալիզմի պաշտպաններ Զինովյելը ու Կամենենիը փորձում եյին հակադեմի իրենց «պլանը», վորի համաձայն ԽՍՀՄ-ն պետք է մնար ազրարային յերկիր: Դա ԽՍՀՄ-ն սորկացնելու և նրան ձեռք ու վոտքը կապտծ՝ իմակերտակացնելու դիշատիչներին հանձնելու գալաճանական պլան եր:

Ստալինը պոկեց այդ անարդ կապիտուլանտների դիմակը, մերկացրեց նրանց արոցիկուտական-մենշևիկյան եյությունը:

XIV համագումարում Ստալինն ընդդեմ, վոր կուսակցության կարմորագույն ինդիբը բանվոր գասակարգի հաստատուն դաշնակըն և միջակի հետ սոցիալիզմի կառուցման դործում:

XIV համագումարը հաստատեց վորպես կուսակցության հիմնական ինդիբ—սոցիալիստական ինդուստրացման կիրառումը, պայքարը հանուն սոցիալիզմի հաղթության կամացումը: Համագումարից հետո, 1926 թ. սկզբին, լույս տեսավ Ստալինի «Լենինիզմի հարցերի շուրջը» աշխատությունը: Այդ պատմական աշխատության մեջ Ստալինն իդեալիստ ջախջախեց զինովյեկանների լիկվիդատորական կապիտուլանտական «վիլխովայությունը» և հիմնավորեց կուսակցության XIV համագումարի գիծը, յերկրի սոցիալիստական ինդուստրացման և սոցիալիստական հաստատություն կառուցելու գիծը: Նա կուսակցության ու բարակություն կառակարգին զինեց սոցիալիստական շինարարության հաղթության անխորսակելի հավատով:

Ստալինի զեկավարությամբ բոլեկինների կուսակցությունը, ուժեր ու միջոցներ կուտակելով և դեռ շարունակ կապիտուլանտներին ու թերահավատներին, յերկրը հաս-

¹ XIV съезд Всесоюзной коммунистической партии (б). Стено-графический отчет. 1926 г. № 488:

յըրեց պատմական նոր ետապին—սոցիալիստական ինդուստրացման հատակին:

VIII

Մի այնպիսի հակայական և միաժամանակ տնտեսական տեսակետից հետամնաց յերկրի ինդուստրացումը պատմականորեն ամենակարծ ժամկետներում, ինչպիսին Խորհրդային Միությունն եր այդ շրջանում, —վիթխարի դժվարություններ եր ներկայացնում։ Պետք եր նոր կառուցել ինդուստրիայի միամբողջ շարք՝ ցարական Ռուսաստանին անհայտ ճյուղեր։ Պետք եր ստեղծել նոր պաշտպանական արդյունաբերությունն, վորը չկար նախկին Ռուսաստանում։ Պետք եր կառուցել ժամանակակից գյուղատնտեսական, հին գյուղին անծանոթ մեքենաների գործարաններ։ Այդ բանը հասկայական միջոցներ եր պահանջում։ Կապիտալիստական պետություններն այդ միջոցները ձեռք եյին բերում ժողովրդի անխնա չահագործումով, գաղութների ու կախյալ յերկրների արյունալի կողովուառով, արտաքին փոխառություններով։ Բայց Խորհրդային յերկիրը չեր կարող ոգտըգել այդ կեղտուա աղբյուրներից, իսկ արտաքին փոխառությունների ճանապարհը նրա համար փակել եյին կապիտալիստաները։ Մնում եր միջոցներ հայթայթել միայն Խորհրդային յերկրի ներսում։

Հենվելով լենինի ցուցումների վրա՝ Ստալինը մշակեց մեր յերկրի սոցիալիստական ինդուստրացման ուսմունքը։ Նա ցույց տվեց, վոր 1) ինդուստրացման եյությունը վո'չ թէ արդյունաբերության պարզ աճումն ե, այլ ծանր ինդուստրիայի և ամենից առաջ նրա միջուկի—մեքենաշինության զարգացումը, վորովհետեւ միայն ծանր ինդուստրիայի և հատկապես մեքենաշինության ստեղծումն ե ապահովում սոցիալիզմի նյութական բարան և սոցիալիզմի յերկիրը դնում կամախալիստական աշխարհից անկախ վիճակի մեջ. 2) կարլածատերերի ու կապիտալիստների եքսպրոպրիացիան մեր յերկրում վորակես զոկտեմբերյան սոցի-

լիստական հեղափոխության հետևանք, հողի, ֆարբեկաների, գործարանների, բանկերի և այլն մասնավոր սեփականության վոչնչացումը և դրանք համաժողովովը ական կուտակման հզոր աղբյուր ստեղծեցին ինդուստրիայի զարգացման համար. 3) սոցիալիստական ինդուստրացումը հիմնովին տարբերվում ե կապիտալիստականից. վերջինը կառուցվում ե գաղութային զավթումների և կողոպտաների, ուղղմական ջախջախումների, ստրկացուցելու վոխառությունների և բանվորական մասսաների ու գաղութային ժողովով, իսկ սոցիալիստական ինդուստրացումը հենվում ե արտադրության միջոցների հանրային սեփականության վրա, բանվորների ու գյուղացիների աշխատանքով ստեղծված հարստությունների կուտակման ու տնտեսման վրա. սոցիալիստական ինդուստրացումն անխղելիութեան կապված ե աշխատանքոր մասսաների նյութական դրության անշեղ բարեկալման հետ. 4) ուստի ինդուստրացման համար մղվող պայքարում արմատական խնդիրներն են աշխատանքի արտադրուղականության բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը, պայքարը համուն աշխատանքային կարգապահության, խնայողության ոեժիմը և այլն. 5) սոցիալիզմի կառուցման պայմանները ԽՍՀՄ-ում, բանվոր դասակարգի աշխատանքային խանդավառությունը—հնարավոր են դարձնում ինդուստրացման անհրաժեշտ բարձր տեմպերի իրադրումը. 6) գյուղատնտեսության սոցիալիստական փոխակերպման ուղին անցնում է յերկրի ինդուստրացման միջով, վորը պետք ե տեխնիկական բազա ստեղծի այդ փոխակերպման համար։

Այդ վորոշակի ու պարզ ծրագրով զինված՝ Խորհրդային Միության աշխատավորները ձեռնամուխ յեղան յերկրի սոցիալիստական ինդուստրացմանը։

Սոցիալիստական շինարարության հաջողություններից գալակացած՝ իմպերիալիստները փորձեցին վիժեցնել կամ գոնե արգելակել յերկրի ինդուստրացումը դիվանագիտա-

կան ու առևտրական հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ խզելու միջոցով (Անդրիա), խորհրդային դեսպաններին սպանելու միջոցով (Լեհաստան), լուսաւական և դիվերսիոն աշխատանքն ուժեղացնելու միջոցով: Յերկրի ներսում միավորվում են տրոցկիստները, գինովյելվականները, առաջներում ջախջախված հակակուսակցական խմբերի մնացորդները և կազմում են մի դավաձանական բլոկ, վորը կատաղի գրոհ և սկսում կուսակցության դեմ: «Ստեղծվում են միասնական ճակատի պես մի բան Զեմբեռլենից սկսած մինչև Տրոցկին», — մատնանշում եր այն ժամանակ ընկեր Ստալինը: Զեր կարելի սոցիալիստական ինդուստրացման հաղթություն ձեռք բերել առանց տրոցկիստական-դինովյելվական բլոկի իդեալան ու կազմակերպական ջախջախման: Ընկեր Ստալինի գեկավարությամբ կուսակցությունը չախջախեց արոցկիստական-դինովյելվական բլոկը: Ստալինի գեկուցումը ԽՎ կուսակցական կոնֆերենցիայում — «Մեր կուսակցության մեջ յեղած սոցիալ-դեմոկրատական թեքման մասին» (1926 թ. նոյեմբեր) և նրա գեկուցումը Կոմինտերնի Գործկոմի ՎII ընդլայնած պլենումում — «Դարձյալ մեր կուսակցության մեջ յեղած սոցիալ-դեմոկրատական թեքման մասին» (1926 թ. դեկտեմբեր) իդեալական զենքին Համկ(բ)կ և Կոմինտերնին և ապահովեցին կուսակցական շարքերի միաձուլությունն ու համախմբվածությունը:

Կոմինտերնի Գործկոմի ընդլայնած պլենումն իր վորոշումների մեջ նշավակեց տրոցկիստական-դինովյելվական բլոկի կողմանակիցներին՝ վորպես մենշևկիլյան դերքերը գլուխած պառակտիչների:

Ջախջախելով և դեն շպրտելով անարդ կապիտուլանտներին և կապիտալիզմի պատպաններին՝ բոլշևիկները շարունակեցին մեր յերկրի սոցիալիստական ինդուստրացման դորձը:

Ինդուստրացման վոչ մի բնագավառ, վոչ մի հարց չեր խուսափում Ստալինի տեսադաշտից: Ստալինն արդյունաբերության նոր ճյուղեր ստեղծելու, առաջներում հետա-

մնաց ճյուղերի զարգացման ու վերակառուցման նախաձեռնողն ե: Ստալինը մեր յերկրում յերկրորդ ածխամետաղագործական բազայի ստեղծման, կուլյասի շինարարության վողենչողն ե: Ստալինը սոցիալիստական կառուցումների կազմակերպիչն ու ղեկավարն ե: Ստալինից աղջիկը արակտորստրոյը, Դնեպրոստրոյը, Մազնիտոստրոյը, Ռուբալմաշտրոյը, Ռոստովի Սելմաշտրոյը, Կուլյանցիկատրոյը, Թուրքակիբը, Սարատովի կոմբայնստրոյը, Մոսկվայի և Գորկիի ավտոմոբիլային գործարանների կառուցումը և մի շարք այլ կառուցումներ—դրանք բոլորը կապված են Ստալինի անվան հետ: Այդ պատճառով ել այն ինդուստրիալ գիգանտներից շատերը, վորոնցով պարծենում և ամբողջ յերկիրը, Ստալինի անունն են կրում:

Սոցիալիզմի՝ ԽՍՀՄ-ում կառուցվող մեծասքանչ շենքեվիթխարի պատկերը անջնջելի աղղեցություն եր գործում կապիտալիստական յերկրների բանվորների վրա: Սկսվեց մի խոկական ուխտագնացություն գեղի ԽՍՀՄ: Տասնյակ ու հարյուրավոր բանվորական պատգամամավորություններ գալիս և հսկայական հետաքրքրությամբ ու բուռն հոգածությունով ծանոթանում ելին, թե ինչպես իրենք բանվորները, գուրս քշելով իրենց շահագործողներին, նոր, սոցիալիստական հասարակություն են կառուցում: Նրանց ամեն բան հետաքրքրում եր, նրանք ամեն բան իմանալ ելին ուղում: 1927 թ. նոյեմբերի 5-ին կայացավ Ստալինի յերկարատև զրուցը Գերմանիայի, Ֆրանսիայի, Ալյաստրոյի, Զեխոսլովակիայի, Չինաստանի, Բէլուխայի և այլ յերկրների բանվորական պատգամամավորությունների հետ:

Արդեն 1927 թ. վերջերին պարզվեցին սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության վճռողական հաջողությունները: Առաջին հանրագումարները տվեց կուսակցության ԽՎ համագումարը, վոր գումարվեց 1927 թ. դեկտեմբերին: Իր հաշվետու զեկուցման մեջ Ստալինը տվեց սոցիալիստական ինդուստրացման հաջողությունների ցայ-

տուն պատկերը և ընդգծեց սոցիալիստական իշխող բարձունքների հետագա ընդարձակման ու ամրացման անհրաժեշտությունն ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում, կապիտալիստական տարրերին ժողովրդական տնտեսության մեջ լիկիդացիայի յենթարկելու կուրս վերցնելով։

ԽՎ համագումարում Ստալինը մատնանշեց գյուղատնտեսության հետ մնալն արդյունաբերությունից և նշեց ամբողջ ժողովրդական տնտեսության սպառնացող այդ դրությունից դուրս գալու յելքը։

«Յելքը, —ասում եր Ստալինը, —մանր և մանրատված գյուղացիական տնտեսություններից հողի հանրային մշակման վրա հիմնված խոչոր և միացյալ տնտեսություններին անցնելու մեջ ե, նոր, ամելի բարձր տեխնիկայի բարայի վրա հողի կոլեկտիվ մշակման անցնելու մեջ ե։ Յելքն այն ե, վոր մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսություններն աստիճանաբար, բայց անշեղորեն, վոչ թե ճնշման կարգով, այլ ցույց տալու և համոզելու կարգով, միացնենք, դարձնենք խոչոր տնտեսություններ՝ հիմնված հողի հանրային, ընկերային, կոլեկտիվ մշակման վրա, գյուղատնտեսական մեքնաների ու տրակտորների գործադրությամբ, հողագործության ինտենսիվիկացիայի գիտական յեղանակների գործադրությամբ։ Այլ յելք չկա»¹։

Ինչու մեր յերկերը կուտանտեսություններ կառուցելու ուղին բռնեց։

Արդեն՝ կուսակցության ԽՎ համագումարի շրջանում ավելի ու ավելի յեր նկատելի դառնում գյուղատնտեսության, հատկապես հացահատիկային տնտեսության հետ մնալը։ Հացահատիկի համախառն արտադրանքը մոտենում եր մինչպատերազմյան մակարդակին, բայց հացահատիկային արտադրանքի ապրանքային մասը, վոր վաճառվում եր տնտեսություններից դուրս քաղաքներին ու բանակին մատակարարելու համար, կազմում եր մինչպատերազմյան

¹ Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց, հայ. հրատ., էջ 388։

մակարդակի մեկ յերրորդեց միքիչ ավելին (37 տոկոսը)։ Դյուզում մոտ 25 միլիոն մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսություններ եր հաշվվում։ Իսկ գյուղացիական մանր տնտեսությունները հենց իրենց բնույթով կիսանատուրալ տնտեսություններ եյին, վորոնք ընդունակ եյին միայն ապրանքային հացահատիկի մինիմումը տալու և անընդունակ եյին արտադրությունն ընդարձակել, տրակտորներ ու մեքենաներ գործադրել, բերքատվությունը բարձրացնել։ Գյուղացիական տնտեսությունների մանրատումը և հացահատիկային տնտեսության ապրանքայնության անկումը շարունակվում եյին։

«Կասկածից դուրս եր, վոր հացահատիկային տնտեսության այլպիսի գրության ժամանակ ԽՍՀՄ բանակն ու թուրքական պետք ե խրոնիկական սովոր կանգնեցնել»²։

Յերկրի առաջ յերկու հնարավորություն կար գյուղատնտեսության մեջ այնպիսի խոչոր արտադրության անցնելու, վորն ընդունակ լինել տրակտորներ ու գյուղատնտեսության մեքենաներ գործադրելու և միքանի անդամ բարձրացնելու հացահատիկային տնտեսության ապրանքայնությունը։ Առաջին հնարավորությունն եր՝ անցնել խոչոր կապիտալիստական արտադրության գյուղում, վոր կնշանակեր գյուղացիական մասսաների քայլայում, մասսայական գործադրկության ստեղծում քաղաքում, բանվոր գաղաքացի ու գյուղացիության դաշնաքի կործանում, կուլտակության ուժեղացում և սոցիալիզմի պարտություն։ Կուլտակության ուժգնութեան այդ կործանաբար ուղին եյին մղում աջ կապիտուլանտաներն ու դարձանաները։

Յերկրորդ հնարավորությունն եր՝ բռնել մանր գյուղացիական տնտեսությունները միավորելու և խոչոր սոցիալիստական տնտեսություններ, կոլոնտեսություններ դարձնելու ուղին, վորոնք ընդունակ լինելին լայնորեն ոգտագործելու տրակտորներն ու գյուղատնտեսական մյուս

¹ Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց, էջ 386։

ժամանակակից մեքենաները՝ հայտնատիկային տնտեսությունն ու նրա ապրանքային արտադրանքն արագ կերպով բարձրացնելու համար: Պարզ է, վոր բոլչեմիկների կուսակցությունն ու Խորհրդային պետությունը կարող ելին դյուզատնտեսության զարգացման միայն յերկրորդ ուղին, կոլտնեսային ուղին:

Բոլչեմիկների կուսակցությունը յելնում եր Լենինի այն խմասուն ցուցումներից, թե անհրաժեշտ ե դյուզացիական մանր տնտեսություններից անցնել խոչըր, կոլեկտիվ, մեքենայական հողագործությանը, վորը միայն կարող եր ուսմակեմիլիոնավոր դյուզացիական տնտեսությունները հանել դարավոր կարիքից:

«Մանր տնտեսությամբ կարիքից դուրս գալ չե կարելի», — մատնանշում եր Լենինը:

Ամենակենսական տնտեսական պահանջը, ժողովրդական կարիքն եր պահանջում կոլեկտիվացման ուղուն անցնել: Յեվ բոլչեմիկների կուսակցությունը Ստալինի ղեկավարությամբ ճիշտ ըմբռնեց այդ կենսական տնտեսական պահանջը, կարողացավ դյուզացիության միլիոնավոր մասսաներին դեպի կոլեկտիվացման ուղին դարձնել:

ԽV Համագումարը վորոշում հանեց դյուզատնտեսության կոլեկտիվացումն ամեն կերպ ծավալելու մասին: Միաժամանակ Համագումարը դիրեկտիվ տվեց ժողովրդական տնտեսության առաջին հնդամյա պլանը կազմելու մասին: Այդպես, սոցիալիստական ինդուստրիա ստեղծելու ամենայնուն շրջանում Ստալինը նշեց մի նոր վիթխարի խնդիր՝ դյուզատնտեսության կոլեկտիվացումը: Այդպիսի պատմական խնդիր իրազործումը պահանջում եր ամենամանրակրկիտ նախապատրաստություն, վորն իր խորությամբ ու թափով Համարձակ կերպով կարող է մի շարքում դրվել Հոկտեմբերյան Մեծ սոցիալիստական հեղափոխության նախապատրաստության հետ: Պրոլետարական հետզափոխության հանձարեղ սորատեղը համարձակ ու անհողող կերպով, ուշադիր ու շրջահայաց առաջ եր տանում կուսակցությանը, վոչնչացնելով դեպի նշված նպա-

տակը տանող ճանապարհին յեղած բոլոր արդելքները, աչալուրջ հետևելով դասակարգային թշնամու մանյովըներին և վայլուն կերպով նախատեսելով նրա գործողություններն ամենամոտիկ ապագայում, վարպետորեն վերախմբավորելով ուժերը հենց հարձակման ընթացքում, ամրացնելով դրաված դիրքերը, ոգտագործելով ոեզերմիները հաջողությունը զարգացնելու համար:

Ստալինի ղեկավարությամբ կուսակցությունը նախապատրաստեց անհրաժեշտ բոլոր նյութական պայմանները, վորպեսզի դյուզացիությունը մասսայաբար մտնի կոլտընտեսությունները: Ստեղծվեց ինդուստրիալ բազ դյուզին մեքենաներ ու տրակտորներ մատակարարելու համար, բազա դյուզատնտեսությունը տեխնիկակես վերապինելու համար: Բայլականաչափ միջոցներ կուտակվեցին կոլտնտեսային և խորհությունների շինարարությունը ուղարկվեցին կուսակցությունը համար, և այդ շինարարությունն ուղարկվեցին կուսակցության ու բանվոր դասակարգի լավագույն մարդկի, ամրացվեցին այն առաջին կոլտնտեսությունները, վորոնք մենատնես դյուզացիներին կոլեկտիվ դյուզատնտեսություն վարելու որինակներ եյին ցույց տալիս: Ստեղծվեցին մեքենատրակտորային կայաններ ու խորհություններ, վորոնք ոգնում եյին դյուզացիներին տնտեսությունը բարելավելու գործում:

Իր կործանումը նախադպալով՝ կուլակությունը փորձում եր դիմադրություն ցույց տալ, «Հացի դործադուլ» եր կազմակերպում, մածելով զրանով ստիպել կուսակցությանը յեթե վոչ կազմակերպությայի յենթարկվել, ապա դոնե նահանջել: Այդ նույն 1928 թվին բացվեց բուրժուական մասնակետների խոչըր վնասաբարական կազմակերպություն Դոնբասի Շախտիի ույանում, իսկ հետո նաև ուրիշ շրջաններում: Վնասաբարները կապված եյին իմպերիալիստական պետությունների հետ:

Կուսակցությունը Ստալինի ղեկավարությամբ արտակարգ միջոցներ կիրառեց կուլակության դեմ և ըսկմեց նրա

գիմադրությունը։ Վնասաբարեները խստորեն պատժվեցին։ Հնկեր Ստալինը կոչ արեց կուսակցությանը դասեր քաղել Շախտիի գործից, և ամենից առաջ բոլշևիկ-տնտեսավարներին՝ անձամբ դառնալ տեխնիկայի դիտակներ, և արագացնել բանվորներից տեխնիկական նոր կադրեր պատրաստելը։

Յերբ կուսակցությունը կուլակության դեմ հարձակման անցավ, կուսակցության կողմից ջախջախված տրոցիստներին ու զինովյանականներին գործարինելու յեկան 1928—1929 թ. թ. Բուխարինը, Ռիկովը, Տոմակին և աջ կապիտուրանների ու կազմիտավորմի ռեստավրատորների նրանց ամբողջ հակակուսակցական խումբը։ Նույն այլ ժամանակ իմպերիալիստները, հենվելով աջերի կապիտուլանտական աշխատանքի վրա, ԽՍՀՄ-ին պատերազմի մեջ քաշելու նոր փորձ են անում։ Անդիւճի և Ֆրանսիայի դժխալոր շտարներում ԽՍՀՄ-ի դեմ նոր ինտերվենցիայի պլաններ են մշակվում, վորք պետք է տեղի ունենար 1929—1930 թվականներին։

Ինչպես վոր Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթությունը 1917 թ. հոկտեմբերին հնարավոր չեր լինի առանց կապիտուլանտներին ու չորայլրեխերներին ջախջախելու, ճիշտ այդպես ել անկարելի կլիներ սոցիալիզմի հաղթությունը գյուղում առանց աջ կապիտուլանտներին ջախջախելու 1928—1929 թվականներին։ Բուխարինյան-ուիկովյան հակակուսակցական խմբի կուսակցության տարած հաղթության մեջ առանձին նշանակություն ունեցան Ստալինի ճառերը—«Աջ վտանգի մասին Համկ(թ)կ մեջ», (Մոսկվայի կոմիտեի և Մոսկվայի Վերահսկիչ հանձնաժողովի պլենումում 1928 թ. հոկտեմբերին) և «Աջ թեքման մասին Համկ(թ)կ մեջ» (Համկ(թ)կ կենտկոմի պլենումում 1929 թ. ապրիլին)։

Ստալինի այդ յելույթներում մինչև վերջը մերկացվեցին աջերը, վորպես լենինիդմի թշնամիներ, ցույց տրվեց,

վոր աջերը կուլակի գործակալությունն են կուսակցության մեջ։

Աջերի դեմ մզվող պայքարում Ստալինը համախմբեց ամբողջ կուսակցությանը և նրան գրոհի տարավ կապիտալիստական շահագործման վերջին պատվարի դեմ մեր յերկուում։ Ստալինի հանձարը, նրա աննկուն կամքը և իմաստուն խորաթափանցությունն ապահովեցին հեղափոխության դրում եր։

«Անցած տարին սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում մեծ բեկման տարի յեր։ Այդ բեկումն ընթանում եր ու շարունակում ե ընթանալ քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիզմի վճռական հարձակման նշանի տակ։ Այդ հարձակման բնորոշ առանձնահատկությունն այն է, վորանոս մեղ արդեն մի շարք վըճողական հաջողություններ ե տվել մեր ժողովրդական առանձնակության սոցիալիստական վերակառուցման՝ (ոեկոնոմարուկցիայի) հիմնական բնագավառներում»¹։

Կուսակցությունը վճռական բեկում ձեռք բերեց աշխատանքի արտադրողականության բնագավառում։ Հիմնականում լուծվեց սոցիալիստական ինդուստրացման ամենակայության ինդիքտներից մեկը—ծանր արդյունաբերություն դժվարին խոնդիրներից մեկը—ծանր արդյունաբերություն արմատական բեկում ձեռք բերեց մեր հողագործությունն արմատական մեջ, մեր գյուղացիության զարգացման մեջ։ Բուռն կերպով ծավալել սկսեց կոլտնտեսագացման մեջ։ Բուռն կերպով ծավալել սկսեց կոլտնտեսագացման մեջ։ Այս մասամյանույնիսկ խոչոր արդյունաբերությունից։ Այդ՝ մասամյան կոլտնտեսային շարժման սկիզբն եր։

«Նորը և մճուական այժմյան կոլտնտեսային շարժման մեջ այն է, —որում եր Ստալինը, —վոր դյուղացիները կոլտնական կոլտնտեսային շարժման սկիզբն եր։

1 Ա. Ստալին, Լենինիդմի հարցերը, 11-րդ հրատ., եջ 370։

անտեսություններն են մտնում վո՞չ թե առանձին խմբերով, ինչպես այդ առաջ եր տեղի ունենում, այլ ամբողջ գյուղերով, վոլոստներով, շրջաններով, մինչև իսկ գավառներով։ Իսկ ի՞նչ է նշանակում այդ։ Այդ նշանակում ե այն, վոր կոլտնտեսությունների մեջ ե մտել միջակը։ Այս ե գյուղատնտեսության գարգայման մեջ կատարված այն արմատական բեկման հիմքը, վորը կազմում ե Խորհրդային իշխանության կարեռագույն նվաճումը...»¹։

Այլպես Ստալինի ղեկավարությամբ նախապատրաստվեց պատմական ըթագարձը կուլակային տարերին սահմանափակելու և գուրս մղելու քաղաքականությունից ղեկավի կուրակությունը՝ վորպես գասակարգ վերացնելու քաղաքականությունը համատարած կոլեկտիվացման հիմքի վրա։

IX

1929 թվականի դեկտեմբերի 27-ին Ստալինը հանդես յեկավ ագրարներմարքսիստների կոնֆերենցիայում։ Իր ճառքի մեջ ընկեր Ստալինը մերկացրեց ժողովրդական տընտեսության սեկտորների «հավասարակցության» բուրժուական թեորիան, ջախջախեց սոցիալիստական շինարարության մեջ «ինքնահոսի» հակամարքսիստական թեորիան և մանր գյուղացիական տնտեսության «կայունության» հակամարքսիստական թեորիան։ Զախջախելով այդ բալոր բուրժուական, հակամարքսիստական, աջ-ոպրոտունիստական թեորիաները, ընկեր Ստալինը տվեց կոլոնտեսությունների բնույթի խորը վերլուծությունը, վորպես տընտեսության սոցիալիստական ձեկի, և հիմնավորեց անցումը համատարած կոլեկտիվացման ու այդ հիմքի վրա՝ կուլակությանը, վորպես գասակարգ, վերացնելուն։

Լենինը զեռ կուսակցության XI համագումարում խոսում եր վերջին ու վճռական մարտի մասին ընդեմ ուղարկան կապիտալիզմի, վորն անում ե մանր գյուղացիական տնտեսությունից, բայց այն շրջանում այդ մարտի ժամկետը

¹ Ի. Ստալին, Լենինիդի հարցերը, 11-րդ հրատարակ., հջ 381։

զեռ չեր կարելի ճշգրտորեն վորոշել։ Ընկեր Ստալինն իրեն հատուկ հանձարեղ խորաթափանցությամբ գլխականորեն ապացուցեց, վոր ներքին կապիտալիզմի դեմ մղելիք վճռական մարտի ժամկետն արդեն հասել է։ Մեծ դիարեկտիկ—Ստալինը ցույց տվեց, վոր կուլակության՝ վորպես գասակարդի վերացումը կուլակությանը սահմանափակելու և գուրս մղելու նախկին քաղաքականության շարունակությունը չե, այլ մի կորուկ շրջադարձ ե կուսակցության քաղաքականության մեջ։

«Յեթե կալվածատերերի հողերի կոնֆիսկացիան Հոկտեմբերյան հեղափոխության առաջին քայլն եր գյուղում, — այլպես և արձանադրված կուսակցության XVII համագումարի վորոշումներում, — ապա կոլտնտեսություններին անցնելլ յերկրորդ և այն ել վճռական քայլն ե, վորը վորոշում ե կարեռագույն ետապը ԽՍՀՄ-ում սոցիալիստական հասարակության պատմանդանը կառուցելու գործում»¹։

Գյուղը սոցիալիստական տնտեսության հասավ այն բանի հետեւանքով, վոր տնտեսական անհրաժեշտությունը պահանջում եր խոշոր արտելային տնտեսության, կոլեկտիվ, մերենայական հողագործության անցնել։ Բոլեկիների կուսակցությունը և Խորհրդային պետությունը մի շարք տարիների ընթացքում գյուղում արտադրողական նոր ուժեր ելին ստեղծում, նոր տեխնիկա—տրակտորներ, կոմբայններ և այլ գործիքներ ելին մտցնում, սոցիալիստական հողագործության կադրեր, նոր տեխնիկային տիրապետող միլիոնավոր մարդիկ ելին պատրաստում։

Ստալինդրագի տրակտորագործարանի գործարկման որը (1930 թ. Հունիսի 17-ին) նրա բանկօրներին ուղղած իր պատմական վողջույնի մեջ ընկեր Ստալինը գրում եր։

«Վողջո՞ւն և հաղթանակի շնորհագորանքներ ԽՍՀՄ-ում առաջին կարմրադրուց արակտորային վելանոտի բանվորներին ու զեկավար կազմին։ Այն 50 հազար արակտորները,

¹ ВКП(б) в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, д. II, № 432։

վոր դուք պետք ե տաք յերկրին ամեն՝ տարի, 50 հազար արկեր են, վորոնք պայթեցնելու յեն բուքժուական հին աշխարհը և ճանապարհ են հարթելու սոցիալիստական նոր կացութաձևի համար դյուզում։ Հաջողություն եմ ցանկանում ձեղ ձեր ծրագիրը կատարելու գործում»¹։

Գյուղում ստեղծված նոր արտադրողական ուժերն անխուսափելիորեն հասցըին նոր, սոցիալիստական հարաբերությունների մարդկանց միջներ։

Ստալինը, բազմակողմանիորեն մշակելով սոցիալիզմի մարքսաստական-լինինյան ուսմունքը, ցույց տվեց, վոր կոլեկտիվացման անցնելը հնարավոր ե վո՛չ թե գյուղացիների հասարակ ու խաղաղ ձեռվ կոլտնտեսությունները մանելու կարգով, այլ կուլակության գեմ դյուղացիների մղած մասսայական պայքարի կարգով։ Անհրաժեշտ եր կուլակությանը ջախջախել բաց կովում ամբողջ դյուղացիության աչքի առաջ, ուստի և համատարած կոլեկտիվացման անցնելն անբաժան կերպով կապվում եր կուլակությանը՝ վորպես դասակարգ վերացնելու ինդըրի հետ։

Ընկեր Ստալինի ցուցումներն այն մասին, թե կուսակցության քաղաքականության մեջ անհրաժեշտ է չըջադարձ կուլակության շահագործողական տեսնդենցների սահմանափակումից դեպի կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը, —կազմեցին կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի «Կոլեկտիվացման տեմպի և պետության կողմից, կորոնտեսային շինարարությանն ողնելու միջոցների մասին» վորոշման հիմքը։

Կուսակցության թշնամիներն ամեն կերպ վորձում եյին վիճեցնել կուսակցության վերցրած՝ յերկրի կոլեկտիվացման կուրսը։ Այդ թշնամական փորձերն արտահայտվեցին վո՛չ միայն աջ կապիտուլանտների անմիջական յելույթով կոլեկտիվացման դեմ, այլ նաև կուսակցական դժի «ձախ» աղավաղումներով, կոլեկտիվացման՝ կուսակցության կողմից սահմանված տեմպերի խախտումով, կամավորության

լենինյան-ստալինյան սկզբունքի խախտումով կոլտնտեսային շինարարության մեջ, արտելի վրայից քայլադյողաբարդեպի կոմունա թռչելով, բնակելի շենքերի, մանր անառունների, ընտանի թռչունների ստիպողական հանրայնացումով և այլն։

Ներքին և արտաքին թշնամիները, ինտերվենտները և նրանց գործակալները հույս ունեյին, վոր այդ «ձախ», իսկ յերեմն նաև գիտակցական պրոլուգացիոն քաղաքականությունը կդժուեցնի գյուղացիությանը խորհրդային իշխանության հետ։ Իմպերիալիստական պետությունների շաբաներում արդեն նշյում եյին նոր ինտերվենցիայի ժամկետները։ Բայց կուսակցության առաջնորդը ժամանակին նկատեց նոր վտանգը։

1930 թ. մարտի 2-ին կենտկոմի վորոշումով հրապարակվեց Ստալինի հոդվածը «Փլսապտույտ՝ հաջողություններից», վորի մեջ Ստալինը հակահարված տվեց «ձախ» խոտորումներին, վորոնք սպառնում եյին կործանել կուտնտեսային շարժումը։ «Հոդվածի մեջ ամբողջ ուժով ընդգծվում եր կուլտնտեսային շինարարության կամավորության սկզբունքը և մատնանշվում եր, վոր անհրաժեշտ է հաշվի առնել պայմանների բաղմագանությունը և ԱՀՄ տարբեր ռայոններում՝ կուլեկտիվացման տեմպերն ու մեթոդները վորոշելիս։ Ընկեր Ստալինը հիշեցնում եր, վոր կուլտնտեսային շարժման հիմնական ողակը դյուղատնտեսական արտելն ե... Ընկեր Ստալինի հոդվածը քաղաքական մեծագույն նշանակություն ունեցավ։ Այդ հոդվածն ողնեց կուսակցական կազմակերպություններին ուղղել իրենց սխալները և ամենաուժեղ հարվածը հասցրեց Խորհրդային իշխանության թշնամիների վրա թրի, վորոնք հույս ունեյին, թե խոտորումների հողի վրանց կհաջողվի գյուղացիությանը վոտքի հանել Խորհրդային իշխանության դեմ»¹։

Կործանիչ հարված հասցնելով «ձախ» աղավաղումներին

¹ «Правда» № 166, 18 հունիսի 1930 թ.։

և դրա հետ միասին հողմացրիվ անելով ինտերվենտների հույսերը, ընկեր Ստալինը, վորագես միլիոնավոր մասսաների ռուսուցիչ, բացատրում եր կուսակցական ու անկուսակցական կարգերին, թե վորն ե զեկավարման արվեստը:

«Նեկավարման արվեստը,—դրում եր Ստալինը,—լուրջ դործ ե: Զի կարելի շարժումից հետ ընկնել, վորովհետև հետ ընկնել—նշանակում ե մասսաներից կտրվել: Բայց չե կարելի նաև առաջ վաղել, վորովհետև առաջ վաղել—նշանակում ե կորցնել կապը մասսաների հետ: Ով ուղում ե շարժումը զեկավարել և միաժամանակ պահպանել կապերը միլիոնավոր մասսաների հետ, նա պետք ե պայքար մզի յերկու ճակատով—թե՛ հետ ընկնողների, թե՛ առաջ վաղողների դեմ»¹:

Դրանից քիչ հետո հրապարակված՝ 1930 թ. ապրիլի 3-ի «Պատմախան ընկեր կոլտնտեսականներին» հողվածում, վոր ուղղված եր միլիոնավոր կոլտնտեսականներին, Ստալինը, ցույց տալով միալների արմատը դյուդացիական հարցում և պլիսավոր սխալները կոլտնտեսային շարժման մեջ, բացառիկ ուժով սլարդաբանեց, թե ինչն ե դասակարգային պայքարի ճակատում հարձակվելու որենքների եյությունը: Զի կարելի հարձակումը շարունակել առանց նվաճած դիրքերն ամրացնելու, —մատնանշում եր ընկեր Ստալինը, — առանց ուժերը վերախմբավորելու, ճակատը ռեզերվներով ապահովելու, առանց թիկունքի ուժերը մոտ քաշելու: Որորտունիստները չեն հասկանում հարձակման դասակարգային բնույթը—հարձակում վո՞ր դասակարգի վրա, վո՞ր դասակարգի հետ դաշնակցած: Մեղ հարկավոր ե, —ասում եր Ստալինը, —վո՞չ թե ամեն տեսակ հարձակում, այլ հարձակում կուլակի վրա միջակի հետ դաշնակցած:

Ստալինյան զեկավարության ընորհիվ, խոտորումներն ուղղելու հետևանքով հաստատուն հիմք ստեղծվեց կոլտընտեսային շարժման նոր հզոր աճման համար: Կուսակցությունն ընկեր Ստալինի պլիսավորությամբ լուծեց իշխա-

նությունը դրավելուց հետո պրոլետարական հեղափոխության ամենադժվար խնդիրը, մանր գյուղացիական տնտեսությունները սոցիալիզմի ռեստրու վրա փոխադրելու խընդիրը, կուլակության՝ վորագես ամենաբազմաթիվ շահագործող դասակարգը վերացնելու խնդիրը:

Այդ մի ամենախորը հեղափոխական հեղաշրջում եր, մի թուիչք հասարակության հին վորակական կացությունից գեղով նոր վորակական կացություն, վորն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ:

Այդ հեղափոխության առանձնատկությունն այն եր, վոր նա կատարվեց վերելից, պետական իշխանության նախաձեռնությամբ, վորին ՑԱՌԻՑ ուղղակի կերպով ոգնում եյին գյուղացիների միլիոնավոր մասսաները, վորոնք պայքարում եյին կուլակային ստրկության դեմ, հանուն աղատ կոլտնտեսային կյանքի»¹:

Հենվելով Լենինի ցուցումների վրա այն մասին, վոր անհրաժեշտ ե մանր գյուղացիական տնտեսություններից անցնել խոչը, արտելային, կոլեկտիվ տնտեսության հոգագործության մեջ, հենվելով Լենինի կոռպերատիվ պլանի վրա, Ստալինը թերիապես մշակեց և կործնականակես կիրառեց կյանքում գյուղատնտեսության կոնկրետացման աւանունը: Այս բնագավառում նորը Ստալինի մոտ այն է, վոր նա 1) բարձրակողմանիրեն մշակեց գյուղում սոցիալիստական տնտեսության կոլտնտեսային ձեռի հարցը. 2) ցույց տվեց, վոր կոլտնտեսային շինարարության հիմնարկան ու գլխավոր ողակը ժամանակակից ետապում գյուղատնտեսական արտելն ե, վորովես ամենից ավելի ճիշտ և գյուղացիներին հասկանալի ձեռ, վորը հնարավորություն ե տալիս կոլտնտեսականների անձնական շահերը/ներդաշնակել նրանց հանրային շահերի հետ, կոլտնտեսականների անձնական շահերը հարմարեցնել հանրային շահերին. 3) հիմնավորեց

1 Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, եջ 419:

անցումը կուլակին՝ սահմանափակելու և դուրս մղելու քա-
ղաքականությունից կուլակությանը, վորպես դասակարգ,
համատարած կոլեկտիվացման հիմքի վրա վերացնելու քա-
ղաքականությանը. 4) բացահայտեց ՄՏԿ-ների նշանակու-
թյունը, վորպես հենակետեր դյուզատնտեսության սոցիա-
լիստական վերակառուցման և դյուզատնտեսությանն ու
գյուղացիությանը սոցիալիստական պետության կողմից ող-
նություն ցույց տալու գործում :

1930 թվի փետրվարին մի չարք կազմակերպություննե-
րի, բանլորների, դյուզացիների և կարմիր-բանակայինների
ընդհանուր ժողովների խաղմալիք միջնորդությունների
համաձայն՝ ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեն վո-
րոշեց ի. Վ. Ստալինին պարզեցատրել կարմիր դրոշի յերե-
րորդ շքանշանով սոցիալիստական շինարարության ճակա-
տում ցույց տված հսկայական ծառայությունների համար:

Կուսակցության XVI համագումարը (1930 թ. հունիսի
26—հուլիսի 13) պատմության մեջ մտավլ վորպես սոցիա-
լիտմի՝ ամբողջ ճակատով ծավալուն հարձակման համա-
գումար: Բացահայտելով սոցիալիտմի՝ ամբողջ ճակատով
կապիտալիստական տարրերի դեմ ծավալուն հարձակման
անցնելու եյությունը, Ստալինի իր դեկուցման մեջ սահմա-
նեց, վորմեր յերկիրն արդեն քեակոխել և սոցիալիզմի
շրջանը:

Զեկուցելով համագումարին յերկրի ինդուստրացման և
գյուղատնտեսության կոլեկտիվացման դործում ձեռք բեր-
ված նվաճումների մասին, Ստալինը դրա հետ միտուին
մատնանշեց, թե ինչ խնդիրներ ե դնում մեր առաջ զարդաց-
ման նոր շրջանը: Յեթև զարդացման տեմպերով մենք հասել
ու անցնել ենք կապիտալիստական առաջավոր յերկրներից,
ապա արդյունաբերական արտադրության մակարդակով
մենք դեռ շատ ենք հետ մնում կապիտալիստական առաջա-
վոր յերկրներից: Այստեղից ինդիր՝ ե՛լ ավելի ուժեղացնել
տեմպերը, խնդիր՝ հասնել ու առաջ անցնել կապիտալիս-
տական յերկրներից նաև արդյունաբերական արտադրու-

թյան մակարդակով: Իր գեկուցման մեջ ընկեր Ստալինը
մատնանշեց կուսակցության խնդիրներն առաջին հնգամյա-
կը չորս տարում կատարելու գործում:

Ամբողջ յերկրի աշխատավորները խանդավառությամբ
ձեռնամուխ յեղան համագումարի դրած հսկայական խնդիր-
ների լուծմանը: Լայն կերպով ծավալվեց սոցիալիստական
մրցությունն ու հարվածայնությունը: XVI համագումարի
մոմենտին սոցիալիստական մրցությունն ընդդրկել եր առ-
ների մեջ մեկ միլիոն բանվոր, իսկ հարվածային բրիգադ-
ների մեջ մեկ միլիոնից ավելի բանվոր եր մտնում:

«Ամենառւագրավը սոցիալիստական մրցության մեջ,—
ասում եր ընկեր Ստալինը XVI համագումարում, —այս ե,
վոր նա արմատական հեղաշրջում և առաջ բերում մարդ-
կանց հայացքների մեջ աշխատանքի վերաբերյալ, վորով-
հետեւ այդ մրցությունը աշխատանքը ամոթալի և ծանր
րեսից, ինչպես համարվում եր աշխատանքն առաջ, դարձ-
րեց պատվի գործ, վառքի գործ, արխուրյան ու հերոսու-
թյան գործ: Նման վոչինչ չկա և չի կարող լինել կապիտա-
լիստական յերկրներում»:¹

Առաջին հնգամյակի պլանի կատարումը պահանջում եր
ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերակառու-
ցում նոր, ժամանակակից տեխնիկայի բազայի վրա: Տեխ-
նիկան վճռողական նշանակություն եր ստանում: Այդ կա-
պիտակցությամբ՝ կուսակցության առաջնորդը սոցիալիստա-
կան արդյունաբերության աշխատողների համարիութենա-
կան առաջին կոնֆերենսիցիայում 1931 թ. փետրվարի 4-ին
«Տնտեսակարների խնդիրների մասին» արտասանած իր ճա-
ռում հետևյալ նոր լողունզն առաջադրեց—«Բոլեկիները
պետք ե տիրապետեն տեխնիկային», «Վերակառուցման
շրջանում տեխնիկան ե վճռում ամեն ինչ»:

Սոցիալիզմի կառուցման գծով կուսակցության լարված
աշխատանքի շրջանում ավելի ու ավելի մեծ նշանակու-

¹ ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, 42 501:

թյուն եր ստանում կուսակցության անդամների ու թեկնածուների մարքսիստական—լենինյան դաստիարակությունը, բոլշևիկյան կուսակցության պատմական փորձի ուսումնասիրումը, պայքարը կուսակցության պատմությունը կեղծողների դեմ:

1931 թվի նոյեմբերին Ստալինը հրապարակեց «Пролетарская революция» ժուռնալի խմբագրության ուղղած հայտնի նամակը, վորք բացառիկ դեր խաղաց կուսակցության շարքերի հետաքա իդեալան համախմբան դործում: Այդ նամակում Ստալինը, մերկացնելով բոլշևիզմի պատմության տրոցկիստական ֆալսիֆիկատորներին, ցույց տվեց, վոր լինինիզմը ծնվել, աճելու ամբազնվել ե բոլոր յերանդների ոպորտունիզմի դեմ մղած անողոք պայքարում, վոր բոլշևիկները աշխարհում միակ հեղափոխական կազմակերպությունն են, վորը մինչեւ վերջը ջախջախեց ոպորտունիստներին ու ցենտրիստներին և նրանց դուրս վոնդեց կուսակցությունից: Այդ նամակում Ստալինն ամբողջ ուժով ցույց տվեց, վոր տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջնորդող ջոկատն ե, վոր պայքար է մղում կոմունիզմի դեմ, Խորհրդային իշխանության դեմ, ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու դեմ:

1933 թ. սկզբներին առաջին հնդամյակը կատարվեց ժամկետից առաջ: 1933 թ. հունվարին Ստալինը հանդեռ յեկավ կենտրոնի և ԿՎՀ պեհումում «Առաջին հնդամյակի արդյունքները» ղեկուցումով: Մեր յերկիրը—մատնանշում եր նա—աղքարային յերկրից դարձել ե ինդուստրիալ յերկր, մասր-գյուղացիական յերկրից—ամենախոչըր, առաջավոր սոցիալիստական հոգագործության յերկրի: Շահագործող դասակարգերը հանված են իրենց արտադրական դիրքերից: Նրանց մնացորդները ցրվել են ամբողջ յերկրով մեկ և Խորհրդային իշխանության դեմ պայքար են սկսել դանդաղ խրամահատությամբ: Այդ պատճառով ել անհրաժեշտ եր բարձրացնել զգաստությունը, պայքար սկսել սոցիալիստական սեփականությունը—Խորհրդային իշխանության

հիմքը պահպանելու համար, ամեն կերպ ամրացնել պրոլետարիատի դիմության:

Կենտրոնի պլենումում ունեցած իր մյուս յելույթի մեջ «Գյուղում կատարվող աշխատանքի մասին»—Ստալինը ավեց կուսակցության գյուղում տարվող աշխատանքի թերությունների խորը վերլուծությունը և նշեց կոլտնտեսային կարգերի ամրացման աշխատանքների մի ամբողջ ծրադիր:

Կուսակցության առաջ ծառացավ մի նոր խնդիր—պայքար կոլտնտեսություններն ամրացնելու համար, աշխատանքը կոլտնտեսություններում կազմակերպելու համար, պայքար կոլտնտեսությունները բոլշևիկյան գարձնելու համար, կոլտնտեսությունները թշնամական կուլակային, վիստարաբ տարրերից մաքրելու համար: Այդ նպատակով ընկեր Ստալինն առաջարկեց քաղաքացիններ ստեղծել ՄՏԿ-ներում ու խորհունտեսություններում: ՄՏԿ-ների քաղաքացինները յերկու տարրեր մեջ (1933—1934 թ. թ.) կարողացան մեծ աշխատանք կատարել կոլտնտեսություններն ամրացնելու համար:

Կոլտնտեսական—հարվածայինների Համամիութենական տուածին համարդումարում 1933 թ. փետրվարի 19-ին ընկեր Ստալինն առաջարկեց ու հիմնավորեց կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունեռ գարձնելու լողունդը:

«Վորպեսզի կոլտնտեսականները գառնան ունենոր, — ասում եր Ստալինը, — զրա համար այժմ միայն մեկ բան է պահանջվում—կոլտնտեսության մեջ աղնվորեն աշխատել, ճիշտ կերպով ողտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ կերպով ողտագործել բանող անսասունները, ճիշտ ճեղվով մշակել հողը, պահպանել կոլտնտեսային սեփականությունը»¹:

Ստալինի ճառը հասավ միլիոնավոր կոլտնտեսականների դիտակցությանը, գարձավ կոլտնտեսությունների գործնական մարտական ծրագիրը:

1. ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, 11-րդ հրատ., էջ 671:

Կուսակցության XVII համադրումարի նախորյակին Լենինգրադում Համեկ(բ)կ կենտրոնի աշխատանքի մասին իր տված զեկուցման մեջ հեղափոխության վողեշունչ տրիբունն ու կուսակցության սիրելի Ս. Մ. Կիբովը հետեւյալ ձևով բնութագրեց բանվոր դաստկարգի սոցիալիստական հաղթությունների մեծ կազմակերպողին.

«Ընկերներ, մեր կուսակցության ծառայությունների մասին, մեր կուսակցության հաջողությունների մասին խոսելիս՝ չի կարելի շխոսել մեր ունեցած վիքիարի հաղթությունների մեծ կազմակերպողի մասին։ Յես խոսում եմ ընկեր Ստալինի մասին։

Յես պետք է ձեզ ասեմ, վոր դա իսկապես լիակատար, իսկապես ամենակողմանի հետեւողը, շարունակողն ե այն ըանի, ինչ վոր մեկ թողեց մեր կուսակցության մեծ հիմնադիրը, վորին մենք կորցրենք սրանից արդեն տաս տարի առաջ։

Դժվար է պատկերացնել մի այնպիսի գիտանութի Փիզուրա, ինչպիսին Ստալինն է։ Վերջին տարիներում, այն ժամանակից սկսած, յերբ մենիք աշխատում ենք առանց Լենինի, մենիք չգիտենիք մեր աշխատանիքի մեջ և վոչ մի շրջադարձ, վոչ մի քիչ քե շատ խոշոր նախաձեռնություն, լոզունգ, ուղղություն մեր քաղաքականության մեջ, վորի հեղինակը վո՛չ քե ընկեր Ստալինը, այլ ուրիշ վորին մենք յեղած լինի։ Ամբողջ հիմնական աշխատանիք—այս պետք է իմանա կուսակցությունը—անցնում է ընկեր Ստալինի ցուցումներով, նախաձեռնությամբ և դեկավարությամբ։ Միջադարյան քաղաքականության ամենամեծ հարցերը նրա ցուցումներով են լուծվում, և վո՛չ միայն այդ մեծ հարցերը, այլև, թվում ե թե, յերբորդական և նույնիսկ տասելուրդական հարցերն ել են նրան հետաքրքրում, յեթե դրանք վերաբերում են մեր յերկրի բանվորներին, դյուզացիներին և բոլոր աշխատավորներին։

Յես պետք է ասեմ, վոր այդ վո՛չ միայն սոցիալիզմի կառուցմանն և վերաբերում ամբողջությամբ վերցրած,

այլ նաև մեր աշխատանքի առանձին հարցերին։ Որինակ, յեթե վերցնենք մեր յերկրի պաշտպանության հարցերը, ապա պետք է ամբողջ ուժով ընդդեմ, վոր մեր բոլոր հաջողությունների համար, վորոնց մասին յես խոսում եյի, մենք ամբողջովին ու լիովին պարտական ենք Ստալինին։

Այս մարդու հօր կամքը, կազմակերպչական հսկայական տաղանդը ապահովում են կուսակցության համար սոցիալիզմի հաղթական կառուցման հետ կապված պատմական մեծ շրջադարձերի ժամանակին կիրառումը։

Վերցրեք ընկեր Ստալինի լոգունկները—«Կոլտնտեսականներին զարձնել ուներություն», «Կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան», «Ճիբապետել տեխնիկային», ընկեր Ստալինի վեց պատմական պայմանները,—այն ամենը, ինչ վոր ուղղություն ե տալիս սոցիալիզմի կառուցմանը մեր աշխատանքի տվյալ ստադիայում,—այդ մարդուց և բըղիություն, և այն ամենը, վոր մենք նվաճել ենք առաջին հեղամարկում, ձեռք են բերված նրա ցուցումների հիման վրա»¹։

1934 թվի սկզբին Ստալինը ղեկավարում է կուսակցության XVII համադրումարի աշխատանքները, վորը պատմության մեջ մտավ վորպես հաղթողների համագումար։ Համադրումարում արած իր հաշվեու զեկուցման մեջ ընկեր Ստալինը ամփոփեց կուսակցության պատմական հաղթությունների, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթությունների արդյունքները։

Հաղթանակեց ինդուստրացման, համատարած կոլեկտիվացման, կուլակությունը՝ վորպես զասակարգ վերցնելու քաղաքականությունը։ Հաղթանակեց մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հարավորության ուսմունքը։ Սոցիալիստական կացութաձեւը (ԱԿԼԱ) դարձավ անբաժանորեն իշխող ուժ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ, մնանակ ուժ ամբողջ ժողովրդական հատակները հատակն իշխան։ Կոլտնտեսուցած բոլոր կացութաձեւերը հատակն իշխան։

¹ Ս. Մ. Կիբով, Избранные статьи и речи 1912—1934. 1939 թ., № 609—610։

թյունները հաղթանակեցին վերջնականապես ու անդառնաւ-
լիորեն:

Բայց Ստալինը նախազգուշացնում էր, վոր պայքարը
ամենաին ել դեռ վերջացած չէ: Թեև թշնամիները ջախջախ-
ված են, բայց նրանց իդեոլոգիայի մնացորդներն ապրում
են և հաճախ զդալ են տալիս իրենց գոյությունը: Մնացել է
կապիտալիստական շրջապատումը: Նա աշխուժացնում և
ողտադրում է կապիտալիզմի մնացուկները մարդկանց
զիտակցության մեջ:

Ընկեր Ստալինը մատնանշում էր, վոր կապիտալիզմի
մնացուկները մարդկանց զիտակցության մեջ անհամեմատ
ավելի կենսունակ են աղղային հարցի բնադավառում, քան
վորեն այլ բնադավառում: Պատասխանելով այն հարցին,
թե վո՞ր թեքումն ե գլխավոր վտանգ ներկայացնում, —
վելիկոսուսական նացիոնալիզմի թեքումը, թե տեղական
նացիոնալիզմի թեքումը, — ընկեր Ստալինն ասում էր, վոր
արդի պայմաններում «գլխավոր վտանգ ե ներկայացնում
այն թեքումը, վորի գեմ դադարել են պայքարելուց, և վո-
